



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


6587

6588

6589

891.99

U-83



2011



Слово о полку Игореве

Պատկերագիր կույտագրութեան համար

1. Introduction

4 4 2 0 6 8

ՀԱՅՈՒԹԻՒՆ ԱՐՄԵՆԻԱ

(U. S. GOVS)



ՏԱՐԱ. Տ. ՏՈՂԱՄԱԶԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ “ԿՈԶԱԿ,,Ի

1912



, 21

ԱՅՐԵՑ ՄԱՐԻ ԽԵ.

Հ. Մանուկյան

Թիվ 1

ԱԿ

ԳԵՂԱՐԱԿԵՏԱԿԱՆ ՀՈՆԴՔՆ ԿԻՍԱՄԵԱՅ

ՏԵՐ ԵՒ ՏՆՈՐԵՆ

891. 99

ՀՄԱՅԵԱԿ ԱՐԱՄԵԱԼ

Q-83

(Մ. Տ. ՏԱՐԱՏ)

ԱԿ

ԴԱՅԱՅԱՅԼԻԿ

ՅՈ
ՀՐԱ
Յ

2003




Տպագր. Տ. ՏՈՂԲՈՒՅՔԵԱՆ

Հրատարակ. ԿՈՀԱՆԻ Ի

Խ. Պօլիս, Աղոթակ Համամ

1912, Մարտ 30

3385



Տպագրութիւն . Տ ՏՕՂ. ԹԱՄԱՀԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Սուլթան Համբայ, Մօլա Թահ

ԱՄԷՆ ԻՐԱԿՈՒՆՅ ՎԵՐԱՊԱՀՈՒԱԾ Ե

z u u g k

در سعادت پوسته قطوشی نومرو ۱۲۵

H. ARAMIANTZ

125 B. P. Centrale, Gonstanfinople (Turquie)

Կ. ՊՈԼԻՍ, ՓՈԽԹԱՐԱԼ թիւ 125

ՏԵՐ Եւ ՑԱՐԵԱՆ

ՀՄԱՅՅԱԿ ԵՐԱՄՅԱՅ

ԴԱՅԼԱՅԼԻԿԸ

Ծանր փորձառութենէ մը վերջ, աշա, հրապա-
ռակ կը հանենք Հայուն Երդերուն այս հաւաքա-
ռն, որ իր համաշափ յաջորդներն ալ պիտի ունե-
նայ պարբերաբար:

ԴԱՅԼԱՅԼԻԿԻՆ կը վիճակի շարունակել փշոտ
համբան մեր մի այլ ձեռնարկին, որուն հանդէս
ցոյց տրուած համազդային ընդհանուր համակրան-
քըն ու քաջալերութիւնը հաստատ յոյս կը ներշն-
չեն մեղ, թէ աւելի խնամքով ու շրջահայեցողու-
թեամբ կաղմուած այս հատորը պիտի հանդիպի
նոյն ջերմ ընդունելութեան, որպիսին արժանացաւ
իր նախորդը:

ԴԱՅԼԱՅԼԻԿԻ ջանադիր պիտի ըլլայ խուսափելու
համար այն ըոլոր պարագաներէն, որոնք կարող
էին այսպէս կամ այնպէս կասեցնել իր սնարդել
գնացքը, սիրով ընդառաջ գնալով քանաւոր ամէն
պահանջի եւ ամեն կերպ ջանալով որ թիւրիմա-
ցութեանց տեղի տուող կէտերը սպառնառ ջրլան
Հայ Երդերու հոգին ու խմաստին աղաւաղելուն:
Այս խօսքերը կըսենք անոր համար, որ Դայլայշիկ է
նախորդին վերագրուեցան, քայլարձակ անիրաւու-
թեամբ, մեղապարտ մտքեր, ուրկէ եւ ծաղում ա-
ռաւ իր դէմ ի գործ դրուած անտեղի հալածանքը,
ինչ որ արդէն ծանօթ է մեր հասարակութեան իր
ցաւառիթ ելքով:

Աւելորդ է ըսել թէ Երկրի ասլած քայլառիկ
կացութեան շնորհիւ պիտի ստիպուինք — այդ կա-
ցութեան տեւսդութեան ընթացքում — Ազգային
եւ Յեղափախական Երդերուն մէջէն դուրս ձգել

այն պարբերութիւնները, որոնք Համիտեան թէժիմի օրով ամենայստակ սպարզութեամբ կարտայայտէին ասլիկարութիւնը տիրող վարչութեան եւ քաղաքական տենչանքները Հայ ժողովուրդին:

Ի՞նչ կրնար երգել Հայը այս երկրին մէջ ա՛յն ժամանակ, երբ օրէնքի տեղ եաթաղանը կիշխէր, բանականութեան տեղ՝ անսահճ կիրքը եւ կոլո տտելութիւնը այն ըոլորին հանդէալ, որ կը ձգտէր սորկութիւնը փոխարինել մարդավայել կեանքով եւ իրաւագուրկ ժողովուրդին տալ քաղաքացիական գէթ ամենատարրական իրաւունքներ:

Ի՞նչ կրնար երգել Հայը, երբ հարկահաւաքն ու միւլթէզիմը կառավարական ամեն կարգի պաշտօնէութեան աջակցութեամբ կը կողոպտէին զինքը, խլելով իրմէ գոյութեան ազդակիները ու իր ընտանիքը մատնելով սովորաններուն:

Ի՞նչ կրնար երգել Հայը, երբ աւատական կարգերը, նոյն կառավարութեան զօրութեամբ, հոգին կը հանէին աշխատաւոր ժողովուրդին ու զայն կը դարձնէին ճորտերու անտէրունջ երամակ մը:

Ի՞նչ կրնար երգել Հայը, երբ իր ընտանեկան պատիւը եւ ըոլոր սրբութիւնները ենթակայ էին ամենալիրը պղծութեան եւ Հայ մարդը իր կնոջ, իր աղջկան, իր քրոջ, իր եկեղեցու եւ հաւատալիքներու անաղարտ պահպանման սպարտանահութեամբ օժտուած էր:

Ի՞նչ կրնար երգել Հայը, երբ իր ֆիղիքական գոյութեան դէմլարուած կը տեսնէր ահոելի Դաւը, որ ծանօթ է Համիտեան Հայաջինջ թէժիմ անունով, եւ երբ նա կը գիտակցէր իր ճակատագրին

Դառնութիւնը:

Ի՞նչ կրնար երգել Հայր, կրսենք, երբ ՀԱՄԱ-
ԶՈՒՄ գոյացուցած էր, թէ թոյլ տալ շարունա-
կութիւնը այդ դրութեան, պիտի նշանակէր գի-
տակացաբար հրաժարիլ գոյութեան իրաւունքն:

Եւ մանաւանդ ի՞նչ կրնար երգել Հայր, երբ
բաղմամեայ փորձառութիւնով եւ օրինական ամէն
միջոց սպառելէ յետոյ նա հոգեւին փարած էր Յե-
ղափոխական կարմիր Դրօշին, որը հպարտ—հպարտ
կը ծածանէր բնաշխարհի բոլոր դիրքերուն վրայ՝
ՄԱՀ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ոսկետառ դրուազներով:

Հնչակեան կուսակցութեան եւ Հ. Յ. Պաշնա-
կցութեան ղեկավարութեամբ մղուած հերոսական
պայքարը, անհաւասար կոխը թուրք բռնապետու-
թեան դէմ տանեակ տարիներ տեւեցին եւ ժողո-
վուրդի ամենալայն խաւերը կլանուեցան Նոր Գա-
ղափարներու ալիքներուն մէջ: Անոր ծոցէն ծնան
եւ ուռնացան բազմաթիւ դիւցազուններ, որոնք ի-
րենց անձնազոհութեան եւ ազատաշունչ գործու-
նէութեան մէջ ապրեցուցին յեղափոխող ժողո-
վուրդին յոյսերն ու յոյզերը, անոր պատմական —
հոգեբանական վայրկեանները, անոր ուրախ եւ տր-
խուր օրերը, զուլումի եւ ակնկալութեռնց, արշա-
վրքի եւ ընդվզումի, աւերումի եւ ստեղծագործող
աշխատանքի, մերթ ահեղամունչ եւ մարտազոռ
ու մերթ սրտաբեկ եւ լալահառաչ արտայայու-
թիւնները: Մէկ խօսքով Յեղափոխական — ազատա-
գրական կեանքի բոլոր ելեւէջները ի հանդէս ե-
կան: Եւ այս բոլորը ամենայն հարազատութեամբ
արտացոլացին Հայուն Հքնաղ Երգերուն մէջ: Այդ

Երգերուն մէջ է, ահա, որ Հայը կապրի իր ըուն
սպատմական կեանքով, իր ըմբռստ, յեղափոխական-
անշատողական Երեկով, Երբ նա տողորուած էր
Անկախ Հայաստանի դաղափարով, իբրեւ անխու-
սափելի եղբակացութիւն Համբիոնեան Բէժիմի աւան-
դած Մեծ Դասերուն։ Այդ Երգերը ուրիշ բան չեն,
բայց եթէ Հայուն նորագոյն սպատմութեան ան-
բաժան մէկ մասը, որուն դէմ մզւող ոնւէ Հալա-
ծանք ուղղակի Հայուն սպատմական կեանքին դէմ
մզուած սկսուի նկատուի . . . :

Դժբաղդաբար այդպէս չեն մտածեր կարգ մը
պետական անձինք, որոնք ազգերու պատմութեան
եւ Երգերու բուն դերին անդիտակ, սետական ի-
մաստութիւն կը Համարեն ըսնի ոյժ գործածել եւ
Հալածել երեկի բանաւոր գրականութիւնը։ Անոնք կը
մոռնան որ յանցապարտ նկատուած մի կարգ դիւ-
ցազներգութիւնները կը վերաբերին Հայուն սպա-
տմական կեանքին, այն օրերուն, Երբ քաներրորդ
դարու Ներոնին, Մեծ Մարդասպանին կոռնոսային
դերիշխանութեան ներքեւ ուրիշ ճար չկար դոյտ-
թիւն սպահանելու, բայց եթէ սեփական ճակա-
տագրին անշատմամբ բոնապետութիւններու ամե-
նէն խայտառակին ճակատագրէն։

Ասոնք կամաւ թէ անդիտութեամբ, կը մոռ-
նան նոյնպէս որ Սահմանադրութեան հռչակումէն
վերջ, Երբ յոյս ծագեցաւ թէ այլեւս վախճան կը
դրուի վաղեմի Հարստահարութեանց եւ անիրաւու-
թիւններուն եւ միջոց կը տրուի Թիւրքիոյ բաղկա-
ցուցիչ տարրերուն աղաս անկաշկանդ զարդանալու
եւ կեանքի ու գոյքի ու սկատուի ապահովութիւն

վայելելու, առաջինը հայն եղաւ որ թօթակեց իր վրայէն անջատողական ամեն ձգտում, եւ ջերմա պէս փարեցաւ Ըսդհանուր Հայրենիքի անքաժանելութեան եւ վերածնման գաղափարին։ Այսպիսով Հայը եղաւ այն ամենավստահելի ու անձնուելը տարրը, որ Օսմանեան Սահմանադրութեան անթերի գործադրութեան մէջ վնասուց իր եւ երկրին երջանկութիւնը . . .

Այսուհետեւ Հայ Դիւցազներգութիւնները դարձան հայոց համար մէյմէկ փրցուած էջեր իր տոհմիկ պատմութենէն, որուն վրայ գուրգուրալու եւ զայն ամենամեծ խնամքով պահպանելու իրաւունք եւ պարտականութիւն ունի իւրաքանչիւր գիտակից հայ։

Այս տեսակէտով մենք կը սիրենք յուսալ թէ համեստ ծառայութիւն մը պիտի մատուցանէ «Դայշայլիկ» Հայ Ազգին եւ ժամանակի ընթացքին մէջ պիտի կրնայ փարատել ամեն տարակոյն բոլոր տարամերժ Ատեաններու սրտէն, հանդէպ Հայուն եւ անոր Երգերուն։

«Դայշայլիկ» Հայուն սրտին գեղգեղելով հանդէրձ, իր գերագոյն նպատակներէն մին պիտի ընէծաւալել նաեւ Գալիք Երջանկութեան սրբազն մեղեդիները։ «Դայշայլիկ» ի էջերուն մէջ զուարթու խրոխտ պիտի լսուի Սոսիալիզմի պատգամը.— Ընկերութարական Գաղափարը կարմքը թելի նման պիտի տողանցէ անոր իւրաքանչիւր թիւին պարունակութիւնը եւ պիտի ջանայ որ Հնչակեան խնկելի Հերոսին ու Դաշնակցական պաշտելի Հայդուկին անձնազոհութեան փառաբանութեան հետ հաւա-

սար սիրով ու աւիւնով երգուի Աշխատութեան
Յաղթանակը, Հաւասարսւթեան ցնծերգը եւ Ընկե-
րային Բոհութեան հրաժեշտը:

Ինչպէս որ երգերու ընտրութեան մէջ պիտի
ըլլանք բացարձակապէս անխտիր, նոյն անխտրա-
կանութիւնը պիտի պահենք եւ երգիչներուն — հե-
ղինակներուն վերաբերմամբ:

Ա.յդ ինքնին ցոյց կուտայ մեր գործը:

Բնաւ տարակոյս չունինք թէ մեր շնորհալի
երգիչներն ու երգչուհիները, տաղաջափական ու
երաժշտական արուեստին սիրահար անձինք սիրով
սիտի փափաքին հանդիպիլ միմեանց «Դայլայլիկ» ի
մէջ, իբր սլատաբեր ժամադրավայրի մը մէջ:

Ա.չքի առաջ ունենալով «Դայլայլիկ» ի սկզ մե-
ծածախս ու պատասխանատու հրատարակութեան
մը նիւթական անխուսափելի դժուարութիւնները,
լիայոյս ենք թէ ամեն ոք սիտի խոստովանի որ իս-
կապէս հանրամատչելի գին մը նշանակած ենք անոր,
այն է տարին (2 թիւը) 10 դր2. (1 թիւը) 6 դրու2,
իսկ ոչ-բաժանորդներու համար խրաքանչիւր թիւը
8 դրու2 կանխիկ:

Ի վերջոյ կը փութանք մեր խորին շնորհակա-
լութիւնը յայտնել բոլոր անոնց, որոնք բարոյա-
պէս եւ նիւթապէս աջակցեցան մեզ «Դայլայլիկ» ը
հիմնելու եւ անոր հրատարակութիւնն անվրէպ
կանոնաւորութեան մէջ դնելու համար:

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԵՎԵՅԱՆԻ ԳՐԱՏՈՒԽ

— 9 —

ՀԱՅԻ ՄԱՂԹԱՆՔ

Andante

Տեր մու թիւն վե ոին հա նեա ճանելնոցին Աֆ նո միսբ մար թասցին ապ ոիլ յաս տիս
դըր մու թիւն վե ոին հա նեա ճանելնոցին Աֆ նո միսբ մար թասցին ապ ոիլ յաս տիս
յաս տիս յաս տիս յաս տիս ոփ նո լուկ մար թասցին Ինպ ոիլ յաս տիս

Պ ալ, տէր մեր, տէր փութա՛,
Զազգն մեր համայն փրկեա
ի թշնամեաց:

Կափո՛ զաչս նոցուն,
Հա՛տ զարմատոյ զբուն,
Եւ զազգ մեր սլարտասուն'
Արա՛ իզօր:

Աչովդ համատարած,
Զազգն մեր արտահալած,
Փոյթ գումարեա'

Յաշխարի Արարատեան,
ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփական
Օտար ազգաց:

Ի քո իջեալ տեղի,
Զաթոռն Հայրապետի՝
Մեր հաստատեա՛:

Զերկարութեան կենաց
Հօրն մեր Աստուածազգեաց,
Շնորհեա՛ պետին մեր հարց՝
Որ զմեզ հովւէ:

Մ. Դ. Թ. Ա. Ղ. Ի. Ս. Դ. Ե. Ա. Ն.

ԱՊԱՅՈՒՄՆԵՐ



աւարք կ'իջնէ, կը ծածկէ Երկիր
Ու կը ստուերանայամէն ինչ կրկին,
Բայց ես մըտախոն ու անկարեկիր ,
Աշերս հեռուն յառած, մեկուսի
Կը սպասեմ լրոիկ, սիրով մ'անձկազին,
Եո՞ր Արշակոյի:

Երկինք կ'ամպօտի, կը լսուք որոս,
Փայլակը տողայ, մըրբնան ամպեր,
Բայց ես բերկութեամբ լուռ, սիրակառօս
Աշերս Երկինք յառած մեղմովին ,
Կը սպասեմ, այս', վառ ու կենաքեր
Ծագող Արեւին:

Առողջ տրիսուր կուգայ ու կ'անցնի .
Անոր յաջորդէ ցուրտ ձըմեռն երբ՝ սառ
Չիւնով ծածկուին կաղնի ու կընձնի,
Երբ շատեր հնձեն, սրտեր կ'արիւնին.
Բայց ես կը սպասեմ յոյսերով միւս վառ
Գալիք Գարունին:

Կալգան ու կ'երրան տարիներ լրոին,
Ծանրաբեռնուած ցաւերով՝ նեռո՞ւ,
Մինչ այն օրերուն՝ երբ մարդիկ ապրին
Պիտի նեւս կեանք մը նառառ, սիրուն՝
Կը սպասեմ, այս՝, եւ այդ օրերու
Նոր Տարիներուն:

Մարզուան

ԱՐԱՄ Յ. ԳԱԶԱՆՃԵԱՆ

ԵՐԿԱՐԻՐ ԳԻՇԵՐ

Երկարի՞ր գիշեր, մեծ տարի դարձի՞ր,
Դաժան, սեւ խաւա՞ր, իջի՞ր, թանձրացի՞ր,
Իմ մուրազն առայ այսօր իրիկուն,
Վերջապէս եկաւ հիւր եարս թաքրուն:

Եօթ սարի յետեւ կանգնի՞ր, արշալոյս,
Թէ չէ կը փախցնէ սիրածիս քո լոյս.
Թողյաւէտ այսպէս խաւարում մնամ,
Միայն եարս միշտ կրծքիս ունենամ:

Ն. ՔՈՒԶՅԿ



ԶԻՆԿՈՐԻ ԵՐԳ



ոի՞ր, իմ նժոյգ, սլացի՞ր շուտով,
Տա՞ր ինձ ցանկալի կուի փոթորիկ,
Կուի մէջ միայն ես արեան գնով
Կը փրկեմ իմ խեղճ, ստրուկ հայրենիք:

Տա՞ր ինձ այն աշխարհ—անցեալում հզօր,
Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
Ռւր, աւա՛ղ, դժբաղդ եղբայրս այսօր
Իւր կեանքն է ողբում օտարին գերի . . .

Անցան շատ դարեր, անցան շատ տարիք,
Ազգս շատ ապրեց քաղցրիկ յոյսերով,
Բայց նորան երբէք չը ժպտաց երկինք,
Չը տեսաւ նա կեանք խաղաղ, անվ ըգով:

Միշտ լուռ ու իոնարի անողորմ բախտին,
Երկա՛ր սպասեց նա կեանքի գարնան.
Բայց նորա առջեւ ոսոխ թշնամին
Իւր սրով փորեց կեանքի գերեզման . . .

Դէ՛մ, թոխ' ը, նժոյգ, սլացիր շուտով,
Տա՛ր ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
Մարտումն է զինւորն իր արեան գնով
Ազգին պարզեւում յաղթութեան դափնիք:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
Փայլեցնում է արեւի պէս պատկերը մարդուն.
Ինչ մարդ ունենայ իր մօտը հաւատարիմ ընկեր
Ցերեկի նման անցնում է մութ գլշերը մարդուն.
Կեանքդ նւիրես ընկերի լաւին՝ քիչ է դարձեալ
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն
Ընկեր եմ ասում, աստւածավախ ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:
Թշնամիները իւր գրայ քալած ժամանակը,
Կտրին հարազատ ընկերն է սուսերը մարդուն.
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զիւան Աշրգ,
Չի սպիտակիւ ամենեւին մէկ հերը մարդուն:

ԱՆՁԳ ԶԻՒԱՆԻ

ԱՅ ԳԵՐԳ




Իա ծագեց արեւելքէն
Արշալոյսին իրեշտակը,
Ողջոյն կուտայ համայն բնութեան
Կ'աւետէ նոր արշալոյս:

Դեղածիծաղ մի կոյս նստեր
Քնարն ի ձեռին գեղգեղեր
Ողջոյն կուտար համայն բնութեան
Աերթ պահապան կը իսկէր:

Կարկաչահոս առուակին քով
Սիրուն թռչնիկ դայլայլէր,
Սոխակ մը կար, տխուր ձայնով
Վա՛րդ, վա՛րդ կըսէր կ'արտասուէր:

Ծաղկօք լեցուն մի բուրաստան
Կար իոն միշտ վարդ կը բուրէր,
Սոխակ մը կար, տխուր ձայնով
Վա՛րդ, վա՛րդ կըսէր կարտասուէր:



ՄԱՅՈՒՄ ՍՕՏ

Հովք ծառերը կը սարսէ . . . կը մսիմ ես մութին մէջ,
թէեւ ցաւիս սեւ կրակը կը վառի ներսս անշէջ:
Վերջըս մօտ է. վաղն առաւօտերը ծագէնոր արշալոյս՝
Սառ մարմինէս շատոնց հոգիս պիտի տուած ըլլայ խոյս
Անկոռնիս քով, միշտ ծնրադիր ինծի խօսիս պիտի դեռ,
Ու անբարբառ իմ քերանիս ի զուր սպասես դու խօսքեր
Թեւերովդ մի՛ շրջապատեր, մի՛ ջանար ա՛լ տաքնելզիս
Սիրտս ա՛յնքան խռոված է որ հոգ չեմ ըներ ես մսիլս:
Վաղը երբոր գերեզմանիս մէջ միս մինակ փակեն զիս
Ո՞հ, այն ատեն արցունքներովդ տաքցուր պաղ հողը
Չիրմիս,

ՀԵՐԱՆՈՒՅՑ ԱՐԴԱԿԵԱՆ



ՀԵՐԱՆՈՒՅ ԱՐԵԱԿԵԱՆ

Ս Ո Ր Տ Ա Ր Ի

Ուր րէժիմին տակ ապրեցանք Տարի մ'ալ
Թէեւ տխուր խռովիներով գաւազին ,
Թէեւ վերֆեր ծահծրկեցին մեր հոգին
Ու չի կրցանք Արդարութեան հաւատալ...:
Բայց ապրեցանք ըլձ սմբերով հեւասպան
Թէ՝ կը տեսնանի՛ Արեւն աղուոր վերջապէս,
Թէ՝ փորորկօս օրերէն վերջ գաւակէզ,
Պիտի բացուին օրերն ազատ, լուսափառ:
Ու այս լոյսով խելայիղած, գինովցած
Կը խլրուինք երկնելու Նոր Կեանին Հայուն,
Հայրենի ուուրք հողուն վրայ տրոխոն.
Հնչեցնելու Զարքօնի Երզն երազուած:
Բոլոր անոնց՝ որոնք կուլան սնկաւին,
Անոնց՝ որոնք կը բնանան ՏՏՏՄագին,
Գաղրողներուն, գործողներուն, ամենինին
Թէ պա՛նն է ալ, Նոր իրումին հոգեւին:
... Ու փրցուցած չենաղ ծաղիկ մ'հայրենի
Գաւառի կոյս կարմիր հողէն, ընթերցող,
Նուիրուելու կուգանք Յեղին տառապալ,
Յանկերզելով Զարքօն-Ազատ Նոր Տարի:
Պիտի զտնես թէրքերուն մէջ այս ծաղկին
Հեմեարն անլուր Յեղին վիշտին դարաւոր,
Արիւնի հոն, արիւնի գոյն ահառո՞ր . . .

Տարի մ'ամբողջ նայէ՛ անոր անձկագին:
Բայց հոգեցունց՝ վե՛ր առ աշխերդ դէայ
հեռուն

Տեսնելու քէ հորիզոններ կը բացուին .

Ըստոփումն ալ Հայ ժիւանին ու գաւին

Ու մի՛ մոռնար Յեղդ այս տարտամ

օրերուն:

ՍՍ.ՀԱՅ.-ՄԵԽԱԿ



قۇمۇشلىق

(Sugar of pure fruit)

~~Григорий Григорьевич~~

Andante

A musical score page featuring four vocal parts: Soprani, Alti, Tenori, and Bassi. The Soprani part is in soprano clef, the Alti in alto clef, the Tenori in tenor clef, and the Bassi in bass clef. The music is in common time (indicated by 'C') and consists of two measures. The first measure starts with a forte dynamic (F) and includes lyrics in Italian: "Ah, come fai". The second measure starts with a piano dynamic (P) and includes lyrics: "Ah, come fai". The vocal parts are separated by vertical bar lines, and the lyrics are placed below the notes.

This image shows a page from a handwritten musical score. The score consists of three staves of music, each with a different key signature and time signature. The lyrics are written in Persian script and are placed directly beneath their corresponding musical lines. The handwriting is in black ink on aged paper.

(*frankfurter*) גְּמַלְתָּה יְהִי־בְּרֵחֶת־עַמְּךָ כִּי־בְּרֵחֶת־עַמְּךָ

Meditation

A page from a handwritten musical manuscript. The top staff is in common time (indicated by 'C') and has a key signature of one flat. It consists of six measures of music for two voices. The lyrics are written below the notes in a cursive script. The bottom staff is also in common time and has a key signature of one flat. It contains six measures of music, continuing from the top staff. The manuscript is written on light-colored paper.

وَعَدَ رَبُّكَ - إِنَّمَا تَرَى مَا يَعْمَلُونَ

~~Utrumque ad - fons et r. agit. C. Utrum
C. r. agit.~~

Ալագեազ բարձր սար է,
Զուրը հիւանդի դեղ է.
Սիրածը սիրածին չեն տալ,
Էս ի՞նչ անօրէն գեղ է:

Մեր դըրանը խընկի ծառ,
Զեր դըրանը խընկի ծառ,
Խնկենին ա բերել բար,
Իմ խօրոտիկ պըզտիկ եար:

Մեր դուանը խնկի ծառ,
Նաշխուն բըլբուլ վըրէն թառ,
Երթար ու գար. շորոր տար,
Սիրուն եարին օրօր տար:

Մեր դըրանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրէն թառ
Գընար ու գար, շըւին տար,
Անուշ եարի թեւին տար:

Մեր դըրանը խընկի ծառ,
Ռոկի բըլբուլ վըրէն թառ.
Կարմիր խնձոր անել տար,
Ալւան ծաղիկ տանել տար:

Երկինքը կամար կապեց,
Մեւ մազերս սպիտակեց,
Փիս մարդի սառ խօսքերը,
Ինձ քեզանից շուտ ջոկեց:





ՀԱՅՈՒՀԻՆ (Նկար Urcaik Ֆերվանեանի)

ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մատազ,
Երբ միսս էք գալիս՝ ասում եմ ևս ա՛խ.
Հալվում եմ, հոսկում օսարութեան մէջ.
Ա՛խ, սիրու խորվում, ցաւիս շրկայ վերջ:

Երբ կարմիր գինին բաժայտումս ածած՝
Սեղանիս վրայ սոռաջս է դրած՝
Աշըրս ակամայ ըրան եմ ձրգում,
Զեր սիրուն սրստէրն եմ մէջը տեսնում:

Տեսնում եմ իւ, ա՛խ, միտսս է մոլորվում,
Դառն արտասույնով աշըրս պըլտորում,
Կարծում եմ բոլոր աշխարհն մըրքնեց,
Արեւն էլ խաւրեց, էնդոր որ տիրեց:

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Զեր սիրուն աշերն էլ ե՞րբ կը տեսնեմ,
Էն սեւ սեւ աշերն՝ սեւ ունիով պատած,
Կարծես՝ երկնալին դալամով բաշած:

Էն սեւ սեւ աշերն, որ շատին ոպանեց, .
Բայց էլի շատին դըմսիսից հոսնեց,
Ես էլ կենկանի տուղովս եմ մեռած,
Առանց կըրակի երուած, խորված:

Էլ ե՞րբ կը տեսնեմ ևս ձեզ ման գալիս,
Բայլ ու բալշայում սէլրան անելիս,
Ինչտեղ ամօրից վարդն էլ է դեղնում,
Երբոր ձեր կարմիր բըշերը տեսնում:

Բըլլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թըռչում է, քրոշում, ամպերում կորչում
Եւ իր Արարցի տեսածն ասելիս
Փառք ժեզ Տէր Աստուած, փառք ժեզ է կանչում:

Հայոց աղջիկներ, ի՞նչ անոն տամ ձեզ,
Թէ հրեսակ ասեմ՝ հրեսակ չե՞մ տեսել.
Թէ մարդ անուանեմ՝ բեղամալ կ'անեմ,
Աւրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես:

Մոլորուած եմ ես օսուր աւշաւիում,
Հաւասն էլ օսուր, օսուր եւ լեզուն,
Աղջիկն էլ օսուր ու ձել չի նրման,
Հայոց աղջիկներ, դ ու ի եմ անմըման:

Չեր սերն է միայն սրբումս պահած.
Չեր սիրով միայն եմ ես կենդանի,
Չեր սերը միայն ես կեանիս մատուած
Օսուրութեան մէջ դեռ կը պահպանի:
ԳԵՂԻՐԴ ՍԵՐԻՄԱՆԵԱՆՑ

ԱՆՈՒՅՆ ՍԻԾԱԿԱՆ • • •

Սիրտս դարձել է մի մանուկ լոլիան,
Չուը եմ խարխըռումնը արան շնչարով.
Նա լալիս է միշտ, անուշ սիրական,
Եւ քեզ է ուզում օք ու գիշերով
Ես նրան ի՞նչ ճար անեմ:

Ինչքան աշխարհում սիրուններ ոք կան
Ցոյց տւի աչքիս, զուը եմ համոզում.
Քեզանից քացի, անուշ սիրական,
Նա ուրիշ ոչ ոք, ոչ ոք չէ ուզում:
Ես նրան ի՞նչ ճար անեմ,
Ն. ԳՈՒԶԱԿ

ԴՈՒ ԶԵՍ ՀԱԽԱՏՈՒՄ

Դու չես հաւատում քե մեզ եմ սիրում,
Թէ գիշեր ցերեկ անմուն անհանգիս.

Միայն մեզ համար մտածում եմ միշտ,
Դու չես հաւատում, որ մեզ եմ սիրում:

Թէ ժու վառ սիրով ես նիւանդ պառկած,
Ռւժու սպառած. լեզուս չորայած,
Ասեմ քո սիրոյն հոգիս կաւանդեմ,
Դու չես հաւատում, որ մեզ եմ սիրում:

Բայց եք յանկարծ ես խելազարւեմ,
Չեռներս ծոցիս փողոցներ օրջիս.
Եւ սիրոյ երգը երգեմ սպալով,
Դու չես հաւատում, որ մեզ եմ սիրում,

Վերջապես քե քո սերբ յաղթելով,
Սպանէ յանկարծ վերջին ժունչս տալով,
Մեզ համար միայն արիւնս բափեմ,
Դու չես հաւատում, որ մեզ եմ սիրում:

Թէ սառ դիակս ամփոփուած լինի,
Մի բանի չոր չոր տախտակների մէջ,
Ընկերներս տանին դագաղս գրկած
Դու չես հաւատում, որ մեզ եմ սիրում:

Ամենին դառն արցունի բափելով պիտի,
Ինձի համբուրեն հրաժես տալով,
Դու չես մօսենալ զեր վերջին անգամ,
Բարեւդ տալու մինչեւ յուիտեան:

Մնող բարեկամին երկինին եւ երկիր,
Իմ սիրոյս համար վկայ եմ կանչում,

Որ սիրեմ անկեղծ դու էլ ինձ սիրես,
Դու չես հաւատում, որ ժեզ եմ սիրում,

Երբ արեւ լուսին խաւարին յանկարծ,
Երբ ինձ իջեցնեն խաւար գերեզման,
Գերեզմանից էլ՝ մի նիշ կարձակեմ,
Որ ժեզ եմ սիրում, էլ չես հաւատում . . .

ՎԱՆԵՑԻ ՈՐԲԻ ԵՐԳԸ

Ա'րեւ, ա'րեւ, դուքս ելիք,
Աչքդ, ունքդ ինձ ցոյց տուք.
Յրտից ճանըս դողում է,
Զըսլախս որբիս տաքաց'ուք:

Հօր ու մօրս սպանաւ
Նամարդ տուշմանն, ո՞ւ թ գը-
նամ.

Փարա չունիմ փառ առնեմ'
Օճախս վառեմ, տաքանամ:

Ա'րեւ, ա'րեւ թէզ արա
Կ Բուք—պօրանը գալիս ա.
Էս օք ցրտից ոք մեռնիմ,
Էլ արեւըդ բնչի՞ս ա . . .

ՍԻՄԷԾՈՆ ՍԱ.ՓԱՐԵԱՆՅ

Ապրիլ ու մոռը
(Վրօնից բարձր կարգերու համար) Աղեղ Մ Յօրթևանցինեան

Adagio

Allegro moder.

con anima

Գ.—Արցունքն ու ծիծաղ անբաժան ընկեր,
Խնչպէս վարդն ու փուշ նոյն արմատն ունին.
Կը ժըպտին կուլան միեւնոյն աչքեր,
Խինդ ու վիշտ—ահա աղբիւրը կեանքին:

Ծանօթ.— Գ. Տունը պլահ երգուի Ա. ին պէս, ուրկէ վեց Բ. Տունը
պիտի կրկնուի:

Արժուի Սեռ



Եռ քարափին արծիւ նստաւ,
Արծիւ նստաւ ու երգեց.

Չորի միջին աղջիկ տեսաւ
Նշխուն տեսքըն զարնուեց:

«Հէյ, ջա՞ն աղջիկ, մարա՛լ աղջիկ,
Ափսո՞ս թոչել չգիտես.

Էդ ծմակում լրիկ-մնջիկ
Պիտի թոշնես ծաղկի պէս:

Թէ թոչեիր - իմ ժայռերին
Քեզ թագունի կ'ընտրէի,
Քուն գար աչքիդ' իմ թեւերին
Անուշ երգով կ'օրը բէի:

Էդ աչքերդ' ինձ սեւ գիշեր,
Ժպիտդ' զառ արեգակ,
Անծէր երկինք քեզ չէր իշխեր
Ու կը լինէր հալատակ:

Եարաք թոչել իէ՞չ չգիտես,
Քեզ ո՞վ ծնեց առանց թեւ.
Եարաք կեանքում իէ՞չ ուզած չես
Օդում թոչել միշտ թեթեւ . . . » :

Էսպէս երգեց ժեռ քարափին
Հպարտ Արծիւն անգուման.
Թուաւ, անցաւ սարէն, ծորէն,
Լալով բախտըն աղջկան:

ՃՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐԴԻՆԵԱՆ



ՀԱՂԱՅՊԱՆԻ ՆԻԶԱՐԱՆԻ



Եթք չորս իատ ջաղացաքար
Կարգով շարուած պտըտւում են
Իրանց ահեղ գոռգըլոցով,
Ամբողջ շէնքը դղբդում են:

Զախչախների չխչխկոցից
Մարդի ականջ խլանում է,
Իսկ զաղացպանն ալրաթաթախ,
Խոր քունն ընկած խըռըմփում է:

Բայց զաղացը եթէյանկարծ
Կտրէ ձայնը, լոէ, սառչի,
Ինչպէս մի թունդ թընդանօթից՝
Զաղացպանը վեր կը թռչի:

Դ. Ա. Ա. Յ. Ա. Ա. Յ.

ՀՈՎԻՌԻ ՀԻՆ



Ա եմ որբիկ խեղճ հովւուիի,
Աշխարհա է այն գեղ մարգը,
Նունս է միայն իմ սիրելի,
Եւ ընկերըս' գառնուկիր:

Իմ զարդս են այն ծաղիկները
Եւ թանկ ոսկիս' անթառամ,
Մետաքսեղէնս' կանաչները
Փափուկ, մաքուր, պատուական:

Պատսպարանս' ժայռ քարերը
Եւ հայելիս' պարզ վոակ,
Բնակարանս անտառները,
Լապտերս վառ արեգակ.

Ես պարծենալ չեմ կարող, չեմ,
Որեւիցէ ուսումով,
Միայն քաղցրիկ երգել գիտեմ
Եւ կեանք վարել սուրբ սրտով:

Այլեւս ինձ քաներ պէտք չեն
Այս աշխարհի նեղ կեանքում,
Ո՞չ հայր, ո՞չ մայր, ո՞չ քոյր, եղբայր,
Ո՞չ ընտանիք, ո՞չ տեղ—տուն:

ՀՈՎԵՐՆ ԱՌԱՆ

Adagio

Հովերն ա ուն տար ո ուս յիշը . Թիւտոնի լան մութն ըն կաւ ,
Ի՞ն զի՞ւ ժէ բիկ - Հի բիշը յու ասս . Տո շող չո զուն
աստին ըն կաւ . Լաց մ բիկ զան . - որ ել շեմ զայ .
- պէր - քր սրբ տիս տուն շեմ զայ .



աթիւ կաթիւ ամախ է ցողում
Սեւ ու պըղտոր երկընքէն .
Մաղիկ - մաղիկ վերքս է ծորուե ,
իմ անգուման , սեւ սըրտէն .

Լա՛ց, մէրիկ ջան, ո՞ր Ել չեմ գայ,
Վէրքըս խորն է, նար չը կայ . . . :

Անգում կեանքում վերը ստացայ
Սրտանց սիրած ընկերէս.
Անխիղն կանքում վերք ստացայ
Անուշ սիրած քուրիկէս . . .

Լա՛ց, մէրիկ ջան, ո՞ր Ել չեմ գայ,
Ազիզ քալէդ Ել չը կայ . . .

Ա. ԲԱՌԴՈՎԵԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ԵՒ ԱՐՏԱՇԷՍ

Պլոր մօլոր Կուրն է գալիս Կովկաս սարերէն,
Մի աննըման ձայն էր տալիս էն միւս ափերէն :
— Փախէ՛ք, աստղեր, արեւ ծագեց Կովկաս սարերէն,
Սաթենիկն եմ, սիրուն եմ ես երկնից լուսնեակէն :

Հայո՛ց քաջեր, քա՛շ դրէք զէնքեր շուտ ձեր ձեռքերէն,
Սաթենիկն եմ, կ'յաղթուիք իմ սիրոյ սրէն:
Քե՛զ եմ ասում, քաջ Արտաշէս, ո՞ւրս եկ վրանէն,
Սաթենիկն եմ, կ'յաղթուիս իմ սեւ սեւ աչքերէն:

Տաք տաք արիւն զուր մի՛ թափեր անմեղ սրտերէն,
Սաթենիկն եմ կ'յաղթուիս իմ կարմիր թըշերէն:
Մի՛ պարծենար քո զօրքերի պէս պէս գունդերէն,
Սաթենիկն եմ, կ'յաղթուիս իմ սիրուն ունքերէն:

Մի՛ խըրոիստար քո յաղթական սէգ սէգ քայլերէն ,
Սաթենիկն եմ, կ'յաղթուիս դու իմ փունջ փունջ մազերէն:
Բա՛ց շուտ շղթայն գերի ըռնած եղբօրս ոտերէն ,
Սաթենիկն եմ կ'յաղթուիս դու իմ ըլըուլ լեզուէն:

Քէն մի' պահիր, վրէժ մի' ուզիր իմ Ալաններէն,
Բարձր է կովկաս, քաջ են Ալանք Մասեաց Քաջերէն:
Զայն եմ տալիս, ձա՛յն տուր ձայնիս քո խոր բանակէն,
Դո՛ւրս եկ մելդան, թէ չես վախում սիրոյս նետերէն:

—Ալա՞ն, Ալա՞ն, յաղթութիւնս առիր իմ ծեռքէն,
Ո՞նց դիմանամ, հալվում է իմ սուրս քո կրակէն:
Ալա՞ն, Ալա՞ն, փառք ու պսակս առիր իմ գլխէն,
Ո՞նց դիմանամ, սիրուն ես դու մեր սիրուններէն :

Եյ դու անգութ, այրվում է սիրտս քո չոր ծարաւէն,
Ո՞նց դիմանամ, չեմ հովանում կուրի ջրերէն:
Տո՛ւր ինձ թեւեր քո մօտ թռչեմ կուրի վըրայէն,
Մի թիթեռնիկ դարձայ ես քո ճըրագի լուսէն:

Հազար կըտամ, տասն հազար իմ անթիւ գանձերէն,
Քեզ ինձ կ'առնեմ հարս-թագուիի քաջ Ալաններէն:
Ոսկւոյ անձրեւ շաղ կըտամ քո գլխիու վըրայէն,
Սէլ կըգնայ մարգարտէ քո ոտի տակերէն:

Կ'թափեմ կուրը լայքու ոսկի կարմիր մորթերէն,
Ծածկուի գետը ընծայաբեր բարձած ուղտերէն:
Ասաց, հեծաւ արի արքայն սեւն իւր ձիերէն,
Արծուի նման ճնշեց, անցաւ կուր գետի մէջէն:

Հասաւ, հանեց իւր կարմիր թոկ օղն ոսկեղէն,
Զգեց, ընկաւ Սաթինիկի մէջքի մէջտեղէն:
Թոփ'ը, փախի'ը, իմ գեղեցիկ սեւ ձիս հըրեղէն,
Մէջքիդ մարալն որս եմ բռնել կովկաս սարերէն:
Թոփ'ը, փախի'ը, մեծն է սա իմ բոլոր որսերէն,
Թեւփդ վըրի կոյսն եմ խլել քաջ Ալաններէն:

ԱԱՄՈՒԷԼ ԳԻՒԼԶՈԴԵՍՆ





ՏԻԳՐԱՆ ԱՎԱԽՈԲԵՍԻՆ (Պարիս)

“ՂԱՐԻՊ,, ԻՆ

Ղ արի'ոլ աղբէր, արի' մեր տուն,
Բուք պօրանին ո՞ւր կ'երթաս,
Հերի'ք այդ քան թափառելով,
Սեւ տարտերդ քամուն տաս:

Անտոն'ւն աղբէր, արի' մեր տուն,
Էս էլ հայի օճախի է,
Իմ պատղ ջուրս, սեւ—չոր հացս
Քեզ սլէս աղբօր հալալ է:

Մշակ աղբէր, արի' մեր տուն,
Տարտ ու ցաւդ ինձ պատմէ',
Լաց—լացի տունք էս մեծ տօնին,
Սիրտս լացի կարօտ է . . .

Շ. ԿՈՒԲՐԴԻՆԵԱՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

(Խամացի աղօկայ երգը)



Եր հայրենիք թշուտ, անտէր,
Եր թշնամուց սանակոխ.
Իր որդիքը արդ կանչում է,
Հանել իր վրեժ քեն ու ոչ:

Մեր հայրենիք շղթաներով.
Այոքան տարի կապկապուած,
Իր քաջ որդւոց ու ւըբ արիւնով
Պիտի լինի ազատուած:

Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Ար իմ ձեռքովս գործեցի
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքովս լուացի:

Նայի՛ր նրան, երեք գնով
Նուիրական մեր նշան.
Թող փողփողի թշնամու դէժ,
Թող կործանուի Աւտրիան:

Ինչքան կին—մարդ, մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իր եղբօրը՝
Զանց չարեցի քո սիրոյն:

Ահա' իմ գործ, ահա' դրօշ,
Շուտ' ձի հեծիք քաջի պէս,
Գնա' փրկել մեր հայրենիք'
Պատերազմի վառ հանդէս:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ' մեռնի,
Բայց երանի՛, որ իր ազգի
Ազատութեան կը զոհուի:

Գնա', եղբայր, Աստուած քեզյոյս,
Ազգի սէրը քաջալեր,
Գնա', Թէեւ չեմ կարող գալ,
Բայց իմ հոգիս քեզ ընկեր.

Գնա', մեռի՛ր դու քաջի պէս,
Թող չտեսնէ Թշնամւն
Քո Թիկունքը, Թող նա չ'ասէ
Թէ վատ է հտալացին:

Ասաց, տւեց օրիորդը
Իր եղբօրը մի դրօշ.
Մետաքսից էր, ազնիւ գործած,
Ու երեք գոյն կար որոշ:

Եղբայրն առաւ եւ ողջունեց
Իր սիրական քնքոյշ քոյր.
Առաւ զէնքը, սուր, հրացան.
Հեծաւ իր ձին սեւաթոյր:

«Քոյրիկ, կանչեց քաջ պատանին,
Մնա՛ս բարեաւ, սիրական.

Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ քանակն իտալիան:

Նա սուրբ է ինձ, երբ մկրտուած
Արտասուքով ու կնքուած
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքին նուիրուած:

Եթէ մեռնիմ, դու մի' սգար,
Իմացիր որ տարեցի
Դէպի մահու արքայութիւն
Իմ հետ քանի թշնամի: »

Ասաց, վազեց դէպի ի հանդէս
Աւստրիացու յանդիման.
Իր արիւնովն գնել յաւէրժ,
Ազատութիւն իտալիան:

Ո՞հ, իմ սիրու կտրտուում է,
Տեսնելով այսպիսի սէր'
Դէպի թշուառ մի հայրենիք
Որ ոտնակոխ եղած էր:

Սորա կէսը, կէսի պէսը
Դէթ երեւէր մեր ազգում,
Բայց մեր կանայք . . . ուր եղիշէ . . .
Ուր մեր տիկնայք փափկասունք . . .

Ո՞հ . . . արտասուքս ինձ խեղդում է.
Ե'լ չեմ կարող քան խօսել . . .
Զէ՛, թշուառ չէ՛ իտալիան,
Եթէ կանայք այսպէս են:

Մ. ՆԱԼԻՔԱՆԴԵԱՆՑ



Ակրերի չուլու ՄԵԾԻՆԻՄ

Adagio sostenuto/Cantabile



արերի հովին մեռնիմ,
իմ եարին բոյին մեռնիմ,
էս օր օխտնօր չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնիմ.

Ախ էնիմ արուն կուգայ
Սեւ սըրտիսգարուն կգայ
ի՞նչ էնիմ ես էն եարը
Պըտըտի տարուն կուգայ:
եար, եար, եար, եար, նա նայ,
Ախ, նանի ջանն անի, վա՛ նա-
նի, նանի ջան:

Լուսնակը կեռ ու կամար,
Քոյը մեռնի եղբօր համար,
Օխտն օր պաս եմ պահել,
Իմ եարի ճամբի համար:
Ախ էնիմ արուն կուգայ
եւայլն . . .

ՀԱՆԳՐՈՒԱՆԸ



Ի իկուն է . . . հեռուն անգոյն
Վերջալոյսը կը մարմրի ,
Հեւալով իր հոգեվարքի
Անանիք առկայծ մոմի
մ' հանգոյն :

Ալեւորի նա ունի գոյն
Կ'արիւնոտին վէս բարձունքներ
Բաժանումի լուռ արցունքներ . . .

Վերջին իրիկուն է ա'լ տարւոյն :
Առուակին մէջ պա'rզ ու յատակ,
Հոսանքն հանդարս այ մի՛շ անխոնց,
Թառամ ծաղիկ մը դեռ բոլբոջ
Կը բաւալէ վար շարունակ :

Հոսանքին հետ արագապէս,
Մերք սուզելով խորն ալեակին
Տատանելով միշ լալագին՝
Կ'զզամ որ կեանիս կ'անցնի ալսպէս . . .

Հոսանքն այդ խօլ ու դիւային
Դրնացքին հետ իր մըրրեկոս,
Իմ երազնե՛րս, յոյսե՛րս ալօս
Կը տանի արդ տարւոյն հետ հին :

Ու խօլ վազքին այդ հոսանքին
Ժամանակը լուռ երկունքով,
Նոր Տարի մը մեզի փուրով
Կը նուիրէ ա'rդ խնդագին . . . :

Արշալոյսիդ, ա'rդ, նոր Տարի,
Շողերն աղւոր լոյսն արփաւէս,
Զուարք կեանքիդ արեւին հետ
Սիրտս տեսնել միշ փափաքի . . . :

Խնկապօղի

ՅՐԹ. Պ. ՓԱՓԱՉԵԱՆ

(ԱՐԻ-ԱՐԱՆՑ)

Կ Ի Լ Ի Կ Ի Ա



Յբոր քացուին դռներն յուսոյ,
եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ
Չքնաղ երկինս մեր Սրմենիոյ,
երբ փայլէ իւր քաղցրիկ օդեր,
Երբոր ծիծառն իր բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ,
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերն Ունուրիոյ,
Լեռն Լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի զերկինս Խտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտոլներ:
Կղզի Նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայրն է արդարեւ,
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի,
Հասակ մը ուր հէգին ի տենչ,
Յիշատակաց իւր կարօտի,
Յորժամ քնարս իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին քարեւս,
Երթամ ննջեմ յիշ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:



ԱՊԻԼ Կ'ՈՒԶԵՄ



ս Յեղ մ'եմ իին դարաւոր ու քանտուած,
ցաւատանջ,

Արարատին Փիւնիկն եմ, Արեւելքին կեանքն իըլու,
Քանի անլուր վէպ ունիմ սա՛ տշխարհին պատմելու,
Ես Ոգի՛ն եմ Հայութեան հալածական, բայց անանց:

Տառ սպանքի ճամբուն մէջ թափառեցայ շատ երկար,
Կուրծքըս' ուռած, աչքս' արցունք ու քայլերս ալ' մոլորուն,
Ու, ա՛խ, ինչե՛ր չի տեսայ հսգեվարքիս օրերուն'
Կեանքին ցաւերն անանուն, Մահուան խաչերն անհամար :

Անդունդներու ահաւոր քովէն անցայ ես, սակայն,
Վիզըս տոկաց դարերու հատու սուրին քմայքին,
Ու, չեռ, կ'ապրիմ այլապէս մինչեւ այսօր մոլեգին:

... Ապրիլ կ'ուզեմ, կեա՛նք կ'ուզեմ, տուայտանքէ՛ վերջ
այսքան,
Ազատ, անդորր կեանք կ'ուզեմ, արժանի եմ ես անոր,
Կեանքի բաղձանքը մէջըս ասրուշան մէ ահաւո՞ր:

Պիտի ապրիմ, կեա՛ք ունիմ վաղլնջական, դարաւոր :
ՍՍՀԱԿ-ՄԵՍՐՈՊ





ԴՐԻԳԱՐ ՇԱՅԱՆԱՆ

Խոսք Յ. Քանիչուն տեսան
Andante

Ձայնդ. Յ. Պ. Չալբրեսոն

Sheet music score for voice and piano. The vocal part is in soprano clef, 3/8 time, key of G major. The piano part is in bass clef, 3/8 time, key of G major. The lyrics are in Armenian. The vocal line consists of five staves of music with corresponding lyrics below each staff.

Կը մի դու կը մի գուն
ան որ մաս կը լուս
լուս - բո վի զիւ ձայ
կը մի դու կը մաս
ան որ մաս կը լուս
չակ > բո վի զիւ ձայ
նով
զօ զան ջով ուժ
պին
կը վիր ար թն ցուք
նով
զօ զան ջով ուժ
պին
կը վիր ար թն ցուք
դու
իւ նած նե բին
տա բա եփր մէն զայր
մեր վիշ նրակա տակ
դու
իւ նած նե բին
տա բա եփր մէն զայր
մեր վիշ նրակա տակ

ՉՈՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ

(Յասնամեակին Առքի)



Նչի՞ր դու, հնչի՞ր աննմա՞ն Հնջմակ
Քողիլզիլձայնով լողանցովուժգին
Հնչի՞ր, արթնցուրդուքնածներին
Տարածի՞ր մէն վսյր մեր վեհ Նպատակ:

Նոր կ'անք է տալիս մեզ, ոզի, կորով
Քո վառ հնչիւնի մէն մի եւ եւ էջ,
Եւցնուծ մեր սրտերով անշէջ,
Եւ Ազատութեան ներշնչում գորով:

Զարանենք ոսխի,— դահճավետ Սուլթան
Վամբիր քորենի, — արիւնաբու Զար
Ճնշեն, կոտորեն, կեղեքեն մեղ յար,
Մեր կեանքն ու արիւն ծծեն, յղիանան:

Սնընդհատ հնչի՞ր, Հնջմակ յաշազատ,
Էնխիղն ոսխներն գնուծ եւ անարգ,
Քո ահեղ ծայնով կոչի՞ր դու ի կարգ,
Եղիր մեր սրտի թարգման հարազատ:

Կոչինք միաձայն.— կեցցէ՛ անսասան
Վեհ գաղափարի սրբազն Հնջմակ,
Վառ Արշալոյսի պարզենք դրօշակ.
Հնչի՞ր, «Մու է մեր Ազատ Ապագան»:

ՅՈՎԱԿԻՄ ՅԱՆՉՈՒՑԵԱՆ



ԾԻՐԱՆԻ .



ս մէկ ծառ եմ ծիրանի
Հին արմատ եմ անուանի.
Պտուղներս քաղցրահամ,
Բո որ մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ արեւելեան,
Չունիմ որոշ այգեպան.
Տունկերս ամէն երկիր
Ընկած են բաժան — բաժան:


Արեւելքում ինձ տնկեց,
Երբոր Աստուած ստեղծեց,
Ասաց — աճէ՛, քազմացի՛ր —
Մի այգի էլ ինձ տւեց:

Ուղարկեց մի այգեպան,
Հարաւից իսկայ իշխան.
Այդ իսկայի անունով
Կոչուեցայ ծառ Հայկական:

Չորս իազար տարւայ ծառ եմ,
Արմատս պինո՛ կայտառ եմ,
Թէպէտ ոյժս պակաս է,
Բայց անունով պայծառ եմ:

ԱՆՐԴԻ — ԶԻՒԱՆԻ





ԹԱՐԱԿԱՆ ԿԱՍՏԵՎԱՅՑ
(Տաղանդառոր Ընկերվարական Գործիչ)

Ծառամասերը Տէր

“ԿԱՇԱԽ”, ին

Կառուցէ՞ք, ըսին գործաւորներուն,
Ճոխ եկեղեցի մուր պաշտենք զնստուած
Կտրուկ մերժեցին սեւ մարդիկն անտուն
Եւ հարուստն առանց Աստուծոյ մնաց :

Դարբնեցէ՞ք, ըսին գործաւորներուն,
Մեր սուրերն եւ մեր զէնքերը մարտի.
Կարուկ մերժեցին սեւ մարդիկն անտուն,
Եւ հայրենիքն ա'լ բառ մ'եղաւ սնոտի:

Նինեցէ՞ք, ըսին, մեծ դուռներ ամուր
Եօթն անգամ դարձող փականքներ ճար-
տար
Մերեց իյնան սեւ մարդիկն, անսարսուռ
Եւ դրամն եղաւ ա'լ անիմաստ բառ:

Չուլեցէ՞ք, ըսին գործաւորներուն,
Մեր կուրծքին համար ըիւր շքանշան.
Կտրուկ մերժեցին սեւ մարդիկն անտուն
Եւ մօր աչաց մէջ ծովն ա'լ չլացաւ . . .

Կազմեցէ՞ք, ըսին գործաւորներուն,
Ոիհեղ ծովառիւծ՝ մարտանաւեռ լաւ.
Կտրուկ մերժեցին սեւ մարդիկն անտուն
Եւ մօր աչաց մէջ ծովն ա'լ չլացաւ . . .

Լարեցէ՞ք, ըսին գործաւորներուն,
Գլխահատ պողպատ, հանգոյց, տանջա-
րան.

Կտրուկ մերժեցին սեւ մարդիկն անտուն
Եւ ոճիրներն ալ նիղճէն խաչուեցան . . .

Եւ եկեղեցի, զէնքեր ու փականք,
Զրահապատ նաւեր եւ շքանշան,
Ինչպէս քաւութեան գործիքներ դաժան
Անցան իբրեւ հին աշխարհին մէկ վանկ:

Ա'լ չունեցան նոր միքենց ետեւէն.
Եւ մգլու, զազիր, անգործ ու տժգոյն,
Ինկան լրութեան անդունդն իմաստուն,
Իբենք որ լրե՛լ միայն տուած եւ:

Եւ գործաւորներն այն սեւ, եղկելի,
Խլած առարկաներն իբենց գերութեան
Իբենց տէրերուն տէրերն ալ եղան,
Սուրբ Աշխատութեան ազատ խիղճով լի:
ԵՒԹԻԱՐԴ ԳՈԼԱՆՃԵԱՆ

Թուղթ Օր. Վասդիկ. *Մանր Հանդադրուտ.* *Եղնձ. Յեր. Չալլբինն*



Լրախ Երգեր ի՞նչպէս Երգեմ
Կմ քնարով վշտալից.

Սէր, խնդութիւն ի՞նչպէս
Եիւսեմ

Կմ սգաւոր լարերից :

Հայրենիքից Թոշնակ Եկաւ
Արիւն հոսող վէրքերով,
Նա քնարիս վերայ նստաւ
Ազատ օրեր տենչալով . . . :

Տխուր ձայնով նա Երգ Երգեց,
Մի Երգ անյոյս, դառնալից,
Լարի վերայ արցունք Թափեց,
Արիւն — արցունք վէրքերից:

Այն օրուանից ի՞նչպէս հրճւեմ
Ես քնարով վշտալից,
Սէր, խնդութիւն ի՞նչպէս Եիւսեմ
Արնաշաղախ լարերից:

ՕՐ. ՔՆԱՐԻԿ

ԱՐԱԶՆ ԵԿԱՒ



բազն եկաւ լափին տալով,
ժեռ քարերին, ափին տալով,
Ո՞րտեղ թաղեմ ես իմ տարտը,
Չոր գլուխը տափին տալով:

Այ իմ Արազ, ջուրըդ վարար,
Սիրուն եարիս եարաք տեսա՞ր,
Ես չը հասայ իմ մուրազին,
Արազ, եարաք կարօտս առա՞ր:

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին,
Աստուած սիրես, Էրւած սըրտիս
Ջուղաք բերես եկող տարին:

Գիշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասուքըս գետ կը շինեմ,
Արա'զ, Ճէգը ջըրիդ չառած'
Իմ սեւ տարտը քեզ կը բերեմ:

Կասես շողքը քարին ընկաւ,
Կրակը սըրտիս մէջն ընկաւ,
Կամար ունքից, Թուխ աչքերից,
Ցաւն իմ ջիւան ջանիս ընկաւ:

Ա. ԻՍՈՂԱԿԵԱՆ



ՊԱԼ ԱՆԲԻՒՐԻ ՄՈՏ



աղ աղբիւրի մօտը կանգնած մի
աղջիկ,
Զեռին սափոր բռնած ջուրն էր անուշիկ
Աչք ու ունք կալամով քաշած գեղեցիկ,
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,
Մի փոքրիկ ակնարկով արաւ ինձ նշան:

Պաղ աղբիւրի մօտը պարտիզում նստած,
Ունէինք լաւ գինի, գառուն խորոված,
Երգում էին ու պարում աղջկերք բոլորած,
Մայրիկ զարնուեցայ եւայլն . . .

Ման էր գալիք ընկերներով միասին,
Կարծես հրեշտակ էր, չէր նա հողածին.
Մազերը ոսկեգոյն, ճակատը լուսին,
Մայրիկ զարնուեցայ, եւայլն . . .

Յերեկը անդադար նորան եմ յիշում,
Գիշերն էլ երազիս մէջն եմ տեսնում,
Տոչորուած՝ ման կուգամ խեղճ մոլար
տրտում.
Մայրիկ զարնուեցայ, եւայլն . . .

Երանի՛ այն աւուր հազար երանի,
Տեսութեան ես կրկին լինիմ արժանի,
Առանց նորան երբէք չեմ մնալ կենդանի
Մայրիկ, զարնուեցայ եւայլն . . .



ԴԱՎԻԹ ԴԱՎԻԹԵՍՆ

(Համբաւառ Զուրականար)

ԴԱԻԻԹ ԴԱԻԻԹԵԱՆԻՆ



Ըմայեցիք քու շեշտերով մագնիսական
ՌԵՆԼԻՆԴԻՐՆԵՐԴ՝ ջութակիդ չորս թելերով
։ նուրբ.

Մեր հոգիներն նոր եռանդով կենդանացան՝
Բատանալով իրենց սնունդն ազնիւ և սուրբ։

Հայուն հանճարն անգամ մըն ալցուցադրեցիք
Ազգի ազգի դիւթուած, թովուած ներկաներուն,
Հայուն հոգին ցոլացուցիք սեռն անքասիք՝
Իբրեւ զաւակ առաքինի միշտ աննկուն։

Բայց, ո՞րչափ շուտ, յանկարծակի անհետացար
Մութ գիշերուան անդնդային խաւարին մէջ.
Վառ ասուպի արագութեամբ անհաւասար
Փախար, գացիք երկնից փայլուն յարկերն անվերջ։

Դաւիթ Դաւթեան անունն անջինջ պիտ' մնայ յար
Խորքերուն մէջ հայուն սըրտին ասպետական.
Համայն ազգեր պիտ' գովեն քեզ միշտ խանդավառ,
Բանի որ դու հանճար մ'էիք անզուգական։

Հ. ՏԵՐ-ՅՈՒԹԵԱՆ



ԱՆԻԻ ՈՂԲԸ



Նի քաղաք նստեր կուլայ ,
Զկայ ըսող՝ մի' լայ , մի' լայ ,
Կ'ըսես քիչ է , Թո՛ղ մնայ՝ լայ ,
Ախ , Ե՞րբ լսեմ՝ մի' լայ , մի' լայ :

Դատ ցաւերով կ'այրիմ տապիմ ,
Չունիմ մէկ մարդ հաւատարիմ ,
Որ խղճալոյս գայ մօտենայ ,
Հեշ չէ ըսէ մի' լայ , մի' լայ :

Յորդուակ

Ախ իայ տղայ , խղճա՛ ինձի ,
Տես թէ քո Անին ի՞նչ պէս է .
Հերիք ես լամ դու չգթաս ,
Չէ՞ քո Անին ափսոս է :

Ախ ու վախով օրերս անցաւ ,
Լալէն աչքերս կուրացաւ .
Որք մնայն ինձ վիճակեցաւ ,
Բախտս բնաւ զիս մոռացաւ :

Կորուսեր եմ թագաւորներ ,
Ժողովեր եմ գլխուս բուեր ,
Որք միշտ կ'երգեն «Անին անցաւ ,
Անին անտէր աւերեցաւ» :

Անին եմ շատ մարդաբնակ ,
Մնացեր եմ դառն աւերակ ,

իմ լացն , իմ կոծն , իմ աղաղակ
Անտէր որբերու նմանակ :

Երբեմն էի շատ աննման ,
Հայոց քաղաքն արեւելեան
Այժմ աւեր հիմնայատակ ,
Նստեր կուլամ , ես միայնակ :

Եկար' տեսար . դարձեր' կ'երթաս ,
Լալով կ'ըսես «քարեաւ մնաս» .
Աստուած սիրես զիս չի մոռնաս .
Մասիս սարին երբ մօտենաս'


Ասա' իմ քաջ Արարատին'
«Նստեր կուլայ քո խեղծ Անին» .
Կ'ըսես' Ե՞րբ գաս աւետիք տաս ,
Թէ՛ «իմ Անի , հերիք է լաս» :

Հ Ա. Յ Տ Պ Ա. Ա. Ն

Ողբերգութիւնդ հերիք , Անի ,
Թշուառացեալ դու լաս քանի՛ ,
Օր մը գթած աչն Անեղին
Մարդասիրեալ' առ քեզ հայի :

Գան ժողովին հայք միաբան ,
Գեղեցկանաս շատ աննման .
Հապա մի՛ լար , սիրուն Անի ,
Անի՛ , Անի՛ , իմ զա՞ն Անի ,

Ա. Վ. ԱՐԱՐԱՏԵԱՆ



ԵՐՈՒՍՆԴ ՔԷՇՍԵԵԱՆ
ՄԵՊՈՒՀԴԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Եարալու սրտիս եարեն երբ ժրի .
իմ ազիզ պալից խալպար ո՞վ բերի .
Սեւառոր մէրկան կուրցած աչերից
Արճախառն արցունիք ևարա՛պ . ո՞վ սրբի :

Մարած է արեւ , սեւցած է վարան ,
Կորսուած իմ պալես մոռցել է մէրկան ,
Դու բարսիրտ աշխարհ , չես անի մեկ նար
Որ ազիզ պալից չառի մեկ խալպար :

Ասէք՝ Երուանդից ես հասրար առնեմ ,
Գլուխ կրծքիս վրայ թողէք որ սեղմեմ ,
Եւ այն ժամանակ ելլեմ աշխարհից
Թոննեմ , հեռանամ , զերեզման մտնեմ ,
Իմ ազիզ Երուանդ ո՞ւ ջանիդ մեռնիմ :





*Houf k' Եղանակ ԴԱՄՆԻԿ ԴԱՆՃԵԱՆ
Ա. Ն Է Ծ Ք*

ԱՅԵՇ մեզ , ա'նգուր , խըրոխս դաւանան,
Երբեղ փառքերուդ հասցուցիր վախնան .
Դուն որ ամենէն կ'առնէիր վրէժ ,
Հիմակ անդունդին ինկար գահավէժ :

Զարշարել տրւիր ծեր , կին եւ տրդայ ,
Քեզմով փընացան կեանիեր անխնայ .
Ասքերդ օձեցիր , հանդարտ , անխրոռվ՝
Նահատակներու սուրբ արիւներով :

Միշտ վըրդովեցիր կեանիերն ամենուն ,
Հա'ցն ալ խըլեցիր , խըմեցի՛ր արիւն ,
Հողերն արգաւանդ ըրիր ցանուցիր ,
Ու զայն արիւնով միայն ծածկեցիր :

Պիտի չը գտնե՛ս մահաւան մէջ իսկ՝ բուն ,
Չըկա՛յ մեզ համար մեռելոց սուրբ տուն .
Անմեղներու վե՛հ արեամբ սոսպաւած՝
Պիտի մերժէ հո'ղն իսկ դիակդ՝ ի բաց :

Դսկ երե փորձեն գեր ծովուն յատակ
Սուզել կեղս մարմինդ զազիր, խայտառակ՝
Պիտի փրտիրրին ծուփերն ու զոռան ,
Երբ տեսնեն սեւ դեմքդ իրենց մէջ դաժան :

Ծովն իր խորքին մէջ ունի ոսկօրներ
Նահաւակներու բազ հայրենասէր,
Այդ սուրբ նրչխարներն անբիծ, անձնուրաց,
Գոռ պատգամներով ըրիր կեր ձրկանց :

Մարմիթը, ա'նզուր, հողն առնել չուզեր ,
Ո'չ ալ ծովերուն հանդարտ ծրփանիներ .
Դուն տեղ մը չունիս աշխարհի վրայ,
Քանզի ամեն բան և եզմէ կը սոսկայ:

ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ



Նւելուս օրից մինչեւ հիմա դեռ,
Հէ խոստովանցը ելինձ ոչմի տէրտէր
Հէնց որտեղ տէրտէր ես աչք եմ ածել,
Ենդել եմ ճամբէս ու թաք եմ կացել:

Բայց երբ տեսնում եմ մի կին գեղադէմ,
Գըժի պէս խսկոյն հէնց վազում եմ դէմ,
Նրա ծոցն եմ ինձ ես տաճար անում,
Նրա ծծերին եմ խոստովանում:

Ն. ՔՈՒԶՅԿ



ԿԱՊՈՒՏԱԿ ԱԶԵՐ

(Սիրահար Սայլուրդը)



Իա սուրբանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուքս Թռչում՝
Եւ Վալդայի տիսուր զանգակը
Կամարի տակ է դօղանջում։
Արթուն սայլորդը գիշերվայ դէմ
Իր վիճակի վերայ տըխրեց,
Եւ սիրուհւոյ աչաց կարօտը
Նա տըխրագին ծայնով երգեց՝
«Կապոյտ աչեր, կապոյտ աչեր,
Կըտրիճիս կեանքը մաշեցիք,
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք չար ոսոխներ,
Ինչո՞ւ սրտերս բաժնեցիք։
«Մնաս բարեաւ, իմ տուն հօրական,
Մընաս բարեաւ իմ սիրական,
Ես կը իանգչիմ, զերդ բոց կրակին,
Այդ անընակ դաշտի միջին։
«Արեւիս լոյսը խաւարել է.
Այս աշխարհումն էլ որք եմ ես,
Մըրտիս կարօտը՝ աղջկայ տեսնելից՝
Մինչեւ ի մահ զըկուած եմ ես»։
Այս որ ասաց՝ շարժեց մտքակը,
Երեք ձիանց մէջքին խըփեց,
Իր սիրուհւոյ պարզ յիշատակը
Այսպէի երգով նա փարատեց։



ՍԱՐԻՆ ԿՈՒԳԻՑ ԶԻՄԻՋՐ.



Սարէն կուգայ ծիաւոր,
Վայլէ, լէ, լէ, լէ,
Մեր տունը չարտախաւոր,
Ենթիլիկ փընճիլիկ կարճըլիկ եար եար.
Ենթիլիկ փընճիլիկ կարճըլիկ եար եար.

Հրէս եկաւ իմ աղբէր,
Երեք օրւան թագաւոր:
Ծառերի հովին դուրպ սն,
Իմ եարի պօյին դուրպան,
Երկու օր ա չեմ տեսել,
Տեսնողի աչքին դուրպան :

Անձրեւ եկաւ շաղալէն,
Ուռի տերեւ դողալէն,
Հրէս եկաւ իմ աղբէր,
Ալ ծին տակին խաղալէն:

Ճամբա՛յ տւէք' առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ.
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ:

ԽԱՂԱՐՈՒԹԻՒՆ ՉԵԶ



Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ,
Որ կուի դաշտում ինկաք անվեհեր,
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք.
Դուք սուր առնելով՝ սրով կամեցաք
Փշրել քռնութեան շղթան ու կապանք.
Բայց, աւա՛ղ, ձեզ հետ մեռան ձեր իղձեր . . .
Խաղաղութիւն ձեզ, սուրբ մարտիրոսներ:

Խաղաղութիւն ձեզ, ազգի քաջ որդիք,
Սեւ հողն է այժմ ձեզ առել իր գիրկ.
Ձեր արեամբ ցողած սար ու դաշտերում
Ահա խնդալից նոր կեանք է եռում.
Փթթել է դարձեալ գարուն ծաղկաւէտ,
Բայց աւա՛ղ դուք էլ չէք փթթիլ յաւէտ . . .
Ցուրտ գերեզմանն է ձեզ առել իւր գիրկ,
Խաղաղութիւն ձեզ, ազգի քաջ որդիք:

Խաղաղութիւն ձեզ, հերոս եղբայրներ,
Թո՛ղ չը վրդովւին ձեր սուրբ ոսկորներ,
Ձեր վերջին կամքը՝ «անէծքը թշնամուն»—
Մենք միշտ կը պաշտենք որպէս սրբութիւն,
Անէ՛ծք ու վրէ՛ֆ— դոքա մեր միակ
Կը լինին կեանքի հզօր նպատակ . . .
Քնեցէ՛ք խաղաղ, հերոս եղբայրներ,
Թո՛ղ չը վրդովւին ձեր սուրբ ոսկորներ :

Ա. ԾԱՏՈՒԹԵԱՆ.



ԳԱՐՈՒՆ



Ի , ի՞նչ անուշ եւ ինչպէս զով
Առահօսուց փեշս՝ նովիկ ,

Ծաղկանց վրայ գուրզուրալով
Եւ մազերուն կուսին փափկիկ :

Բայց չես նովիկ իմ հայրենեաց ,
Դնա՛ , անցիր սրտես ի բաց :

Ոհ , ի՞նչ աղու եւ սրտագին
Ծառոց մէջին երգես , քոչնիկ ,
Սիրոյ ժամերն ի յանտառին ,
Ըզմալեցան ի ժո ձայնիկ :

Բայց չես քոչնիկ իմ հայրենեաց ,
Դնա՛ , քոիր սրտես ի բաց :

Ո՞հ , ի՞նչ մրմոնջ հանես , վտակ ,
Ականակիս եւ հանդարտիկ ,
Քու հայելոյդ մէջ անտպակ
Նային զիրենի վարդն ու աղջիկ :

Բայց չես վտակ իմ հայրենեաց ,
Դնա՛ , հոսէ սրտես ի բաց :

Թէեւ քոչնիկն եւ նովն հայոց
Աւերակաց քոչին վերայ .
Թէափէս պղտոր վրտակն հայոց
Նոնիներու մէջ կը սոլոյ .

Նոյա հառա՛չ են հայրենեաց .

Նոյա չերքա՛ն սրտես ի բաց :

Մ. ՊԵՇԻԿԹԱՆԵԱՆ





ՖՐԻՏՐԻԽ ԷՆԳԵԼՍ



ԵՍ ԶԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ

ս ձեզ ասում եմ. կգայ այն օրը,
ըստ ամէն մի մարդ աղա թէ բանւոր
իր աշխատանքի կրառնայ տէրը
ու ազատ, անհյոգ կապրի բաղդաւոր:

Նենգաւորների դժնդակ սրտից
Կիրքը մարդկային կը կորչի անհետ,
Կը լրի եսը շանթւած ամօթից
Եւ գայլն ու գառը կ'ապրին իրար իետ :

Ու ել չի տիրիլ անարդ ստակը,
Մարդուն մարդոց դէմ չի՛ զինիլ անվերջ.
Ամբիօն կենի հալալ վաստակը,
Իրար յոշոտող կուին կտայ վերջ:

Ես ձեզ ասում եմ... մօտէ այն օրը...
Թո՛ղ ստրուկներին թւայ այդ երազ.
Նորան կը հասնի կուռղ քանւորը ,
Մարտնչողների է դա իէզ մուրազ:



ՀԱՅԵՐՈՒՍԹՈՒՔԸ



ուն խելօք, հաշուով վաճառական ես ,
Միւլք, փող ու ալրանք կ'ասեն, շատ
Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան ,
Թըքել ենք քու ալ' փողիդ ալ վըրան:

Քաջ ես՝ լսել եմ. ինքըդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունիս փառաւոր,
Բայց թէ թըրէդ շահ չունի Հայաստան ,
Թըքել ենք քու ալ թըրիդ ալ վըրան:

Ի վերուստ քանքար քեզի տրուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փըռուած է.
Բայց թէ գըչէդ շահ չունի Հայաստան
Թըքել ենք քու ալ' գըրչիդ ալ վըրան:

Հեռատես մըտքով դուն զարգարեցար,
Հըզօր իշխանին սիրելին դարձար,
Բայց թէ մըտքէդ շահ չունի Հայաստան ,
Թըքել ենք քու ալ' մըտքիդ ալ վըրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Ճատ կը յօրինես թանկագին բաներ,
Բայց թէ ձեռքէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ' ձեռքիդ ալ վըրան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար իրոշակ ու իանճար,
Բայց թէ լեզուէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ' լեզուիդ ալ վըրան:

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովեստըդ լրցուած է մարդոց քերան.
Թէ ուսումէդ շահ չունի Հայաստան,
Թըքել ենք քու ալ' ուսմանդ ալ վըրան:

ԳԱՐԱՌ-ԳԱՅԻՊԱ.



Andantino

• : Եղանակ. Միջան Բայրութի

Սի բուն մաս
Հակ
արդ ծօքին չու
դուն
այդ պէս Ծով տին մէ շ
կը ծաղկիս հօ ուռ ն
տն բն նե
րուն մէ զ
ին չու պահ ուը սփ ս
ու հը պարտ ծաղ կան ց
կար գին կը կախ չի ս
Բայց շլք նաղ ծա
վի հ
Երբ կը տա զնն քեզ
ա և մ լի ա նու շ
բուր մոնց կար գա հե ս
քան շատ ծաղիկ ներ
ո բուք պըն նուց
ի հ
ճուն ար գու
զար ու զ
մաս բան կա զի զ.

ՄԱՆԻՇԱԿԸ



իրուն մանիշակ, արդեօք ինչո՞ւ դուն
Սյդպէս իովտին մէջ կը ծաղկիս իեռուն,
Տերեւներուն մէջ ինչո՞ւ պահուըտիս
Ու իպարտ ծաղկանց կարգէն կը փախչիս :

Բայց, չըքնա'ղ ծաղիկ, երբ կը քաղեն քեզ
Աւելի անուշ բուրմունք կ'արձակես,
Քան շատ ծաղիկներ որոնք պըննուին
Ճոխ արդուզարդով փայլուն թանկագին:



Պ Ա Խ Բ Գ Ե Ն Ի Ս Ա Մ Ա Հ
Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն




լգլալով ջուր է իշնում,
Մշոյ մշուշ սարերէն :
Ծիծեռները ծիւ ծիւ եկան ,
Գարնան գալը երգելէն :

Գարուն չկայ հայուն համար .
Ծաղիկ , ծիծեռ մեզ պէտ չեն ,
Գերեզմանս հողին հաւասար ,
Թո՛ղ փուշ բուսնի իմ վրէն :
Դնա՛ , ծիծեռ , թող ինձ մինակ ,
Վէրքը սրտիս հողի տակ :

Բայց երբ տեսնես թշնամու դէմ ,
Հայ ժաղովուրդ սարի պէս ,
Զէնքը ծեռին , հպարտ կանգնած ,
Կուրծք դէմ տուած ժայռի պէս :

Այս այն օրը արի ծուայ .
Գարնան գալը նո՞ր կանչէ ,
Հայոց գարնան , որ բիւր բարեւ ,
Սիրտս խորէն դողանչէ . . . :


Հ. Գ .





ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼԸՆ

“Ք ՐԻՍՏԱՓՈՐԻՆ,,



ու անցար, հերո'ս, դէ՛մ իանգիստ քեզ քուն
ու լուսադէմին մեռար լիայոյս,
ու ճամբօրդ էիր դէպ ազատութիւն,
Երբ դեռ հեռո՛ւ էր, հեռու արշալոյս:

Տե՛ս, ի՞նչ հերոսներ՝ երգովք ստեղծւած՝
Փակեցին աչքերդ, որ իանգիստ առնուս:
Հերոսների մէջ դո՛ւ մեռար, հերո'ս,
Մարմնով դառար իոդ, իոգով արշալոյս:

Երնէկ քո յոյսին, նա՛, որ չէր դողում,
երբ թոյլ տքնում էր մեր հանիսն անյոյս,
Այն օձե՞ր էին եւ գործեր սողում,
Քանզի գալու էր անշուշտ արշալոյն . . .

Սակայն երբ ազգդ թմբուկով ու փողով
Դէպ՝ երբ աշատութիւն երեւայ սրտայոյս,
Դու կզառ անտեղ յարութեան շոշով,
Բոյց ննջի՞ր . . . դեռ կայ մինչեւ արշալոյն . . .



ԶԱՐԹԻՐՈՐ ՈՐԴԻԱԿ



արթի՞ր որդեա՛կ, ուշ ըե՞ր, վեր
կա՛ց,

Պատերազմի փողն հնչեց.

Զարթի՞ր գոչեց ձայն հայրենեաց,
Կենաց-մահու ժամն հնչեց:

Պատրաստեր եմ քո զէնքեռ
եւ քո գոտին ոսկեթել,
եւ մի պատկ ոսկեփետուր
Երկինք կանխէ պատրաստել:

Հաւաքեր եմ ւո զէնքեռը,
Ահա գլխիդ վերեւ կան,

Կայլայլիկ

b.

Ինչպէս երբեմն քո գըքերը.
Եթէ կերթայիր վարժարան:

Ելի՛ր, կապեմ սուրը մէջքիդ,
Ասպար կապեմ քոյ ուսէդ,
Եւ սուրը դրօշակն հայրենիքիդ
Թող ծածանի ազ թեւէդ :

Միթէ դու չե՞ս յիշեր, երբոք
Գրիչ ու թուղթ տուի քեզ,
Փոխան դոցա, չըսի՞ մի օք
Ուրիշ բաներ կուտամ քեզ:

Այս փոխան գըչի' քեզ սուր
Փոխան թղթի—կռուի դաշտ,
Ազգի համար գնա', կեանք տուր,
Քոյ մայր ժպտի երկինք հաշտ :

Գրչով ուսար Ազգ, Հայրենիք,
Գնա' սուրով փրկել զայն.
Մեր հայրենեաց վշտաց հերի՛ք'
Չըսաւ աշխարհը համայն:

Մեր հայրենեաց թշուառութիւն
Երկրիս ազգաց մէկը չունի.
Մեր խեղճութեան կարեկցութիւն
Երկրիս վրայ մարդ չունի:

Գնա', որդեա'կ, այդ սեւ Չարիք
Խեղճեց շունջը քոյ ազգի.
Գնա' փրկել քոյ հայրենիք,
Թէ ո'չ է՞ր քեզ ծնեցի:

Քսան տարի կերակրեցի
Մինչ հասակդ այդ առիր.
Բարձր հասակիդ մայրդ մեռնի,
Դու ալ քու ազգիդ մեռիր.

Դու հայրենեաց սեղանին զոհ՝
Մարտի՛ր, որդեա'կ, ժամն հասաւ,
Երկինք ու ազգ յայդ մնան գոհ,
Հայրդ ալ վասն այդ քեզ ծնաւ:

Յառաջ, որդեա'կ, ահա կերթան
Քու ընկերներդ բիւրաւոր,
Որպէս ընկեր դպրոցական,
Քաղցը է ընկեր կոռւարար:

Յառաջ, որդեա'կ, ի մարտ անմահ,
Տուէք անվախ կուրծք ու ճակատ.
Հոգ չէ թէ քեզ կը գտնէ մահ,
Զի յայնժամ է ազգն ազատ:

Պ. Վ. ՆԱՅԱՆԵԱՆ



All^o Mod. (tempo di marcia) Կոհակ (խոյերգ) Եղիս Արքական


All^o Mod. (tempo di marcia)

ԿՈՀԱԿ



ըմուէ', ԿՈՀԱԿ, զի անփոյթ ես խռովքէն
Ահեղագոռ յորձանքներու մշտատել'
Որոնց հանդէալ կը ճակատիս անդեղեւ
Մէկուի թողած ատելութիւն, խեթ կամ
քէն :

Քալէ', ԿՈՀԱԿ, արահետէդ դժուարին.
Տառապանքի տուայտանքի զոհերն հէք
Պիտի ուղղեն սրտի խորէն քեզ օրինենք,
Քանի զանոնք առաջնորդես իտէալին:

Նայէ', ԿՈՀԱԿ, Թակարդներուն ժանտատես,
Տզրուկներու խարդաւանքն անարգել'
Անխիղճօրէն կը միտին քեզ անարգել.
Զէ՞ որ ծծուող անխօս զոհին բողոքն ես :




Պահէ՛, ԿՈՀԱՆԻ ՁԵՒ ՌԵՎՈՒԹԻՒՆԻ անայլայլ,
Խոկալի՛ դ . . . դէմու զցուած են ամրակուռ
Խոչեր, սակայն պիտ' կոխելուեն ռուաթուք
Պարտեալներու յաղթութեան մէջ լուսափայլ . . .

4 Փետր. 1912

ՀՅՈՒՅԵԱՆ ՔՀԿՑ. ՊԼԽԹԻԱՐԵԱՆ

Խճալու



ՎԵՐՋԻՆՅՈՅԱԿ



(օրօր)

լէտանչ հոգւոյս միակ մխիթար,
ծաղկի'ր վարդի պէս, փթթի'ր անդա-
դար .

Օրօր, իմ հոգեա'կ, թանկագին զաւակ,
Դու կեանքիս միակ հզօր աշտարակ:

Գալիս է գարուն. ծաղկում են դաշտեր,
Այրի մայրիկիդ շատա՞ռւմ վշտեր,
Օրօր, իմ հոգեա'կ, թանկագին զաւակ.
Դու սիրոյս միակ անգին յիշատակ:

Արցունքից խաւրած' աչքերս են լալիս.
Երբ անցած օրերս իմ միտու են գալիս.
Օրօր իմ հոգեա'կ, թանկագին զաւակ,
Դու աչքիս միակ լուսոյ աշտարակ:

Մահու բաժակից քամում եմ մըուը.
Կեանքովդ կեա՞նք տուր մայրիկիդ տխուը.
Օրօր, իմ հոգեա'կ, թանկագին զաւակ.
Դու հոգւոյս միակ բարի հրեշտակ:

Աշխատի'ր լինիս դու բարի պարձանք,
Հայրենի տանդ արժանի ժառանգ.
Թէ մեռնիմ, ի՞ո՞գ չէ, եւ այն ժամանակ
Անքաղդ մայրիկիդ յիշէ՛ շարունակ :

Ս. ՓԻԼՕՑԵԱՆ





ԱՐԴԱՒԱՆՔ

ըշաւեն քաջք յասպար, ի սուր,
Դոռ մարտադրին դաշինքն ի զուր,
Ծախսեցին ի հուր.

Վառեալ ի զէն, ի զարդ փառաց,
Արիական տոհմք քաջազանց
Ի վրէժ հայրենեաց:

Հապ. օ՞ն արիական տոհմք քաջազանց
Ելէ՛ք ի մարտ գերապանձ :

Թնդաց Երկիր քաջանց ի գնացս,
Երկինք առնեն հովանի զաւս
Յարեաց ճեպընթացս:

Վաշտք անմահից մեզ մարտակից'
Յանշէջ ի բոց վառեն զոգիս
Վանել զթշնամիս, հապ օ՞ն եւն:

Զարթեան արիք կուռ քաջալանց,
Ի հայրենեաց փառեալ ճաճանչ,
Դիմեալ աննահանչ.

Նըզօր փառաց պերճ յաղթանակ,
Յերկնուստ ի ձօն բոլորի պսակ,
Քաջաց մըցանակ, հապ, օ՞ն եւն:

Հ.Պ.Վ. ՄինԱՍԵԱՆ





ՆԵՐՍԻՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՆԵՐՍԷՍԻ ՄԱՂԸ



այտուանի արեգակը,
Արեւմուաքէն խաւարեց,

Տաճկահայոց յոյսն ներսէս,
Կւը սուրբ հոգին աւանդեց:

Տաճկահայը երկինք նայեց՝
Տեսաւ ասող մի խաւարած,
Գլխին տալով շատ արտասուեց,
Մեծի մահը գուշակեց:

Զանցաւ մէզ ժամ, Պօլիս գուժեց,
Տխուր լուրը Հոյ ազգին,
Նախածանօթ Տաճկաստանին,
Աղելսում էր լալագին :

Խաս-գիւղի մեծ պայծառ ասողը,
Եւ չի փայլում երկինքում,
Որովհետեւ մեծն ներսէս,
Բնկղմուած է խոր քնում :

Իմ սրտումս ունիմ ես մի քան թագուն
Օծուած հրապոյրով հրեշտակայի՛,
Դիւթիչ թալիսման իմ վառուած հոգուն
Դա' պատկերն սիրոյս է թագուհիին :

Իմ սրտումը ունիմ զաւ անբուժելի՛
Հուրի օղակով նրան ամուր գերած,
Մահուան գայթակղանք անհանդուրժելի,
Դա նրա' պատկերն է, որն է իմ սիրած:

ԼԵԹԵՆՅ

Andante affettuoso

The musical score consists of eight staves of music. The vocal line starts with a melodic line in G minor, 2/4 time. The lyrics are in Armenian, with some words underlined. The piano accompaniment provides harmonic support with bass notes and chords. The music is divided into measures by vertical bar lines.

Armenian lyrics:

- Հաս րիր իսկ. զան է քան, ևս որր բա որ որու տես լու,
- Ոի նամ սա ըր մըթ նե լա հա ըրր բա որ որու բան թե լու.
- Ոի նամ սա ըր մըթ նե լա հա ըրր բա որ ու ու ու լու.
- Մող նը վայ շու թո լող ցա , Մող նը վայ շու շն գող ցայ .
- Օխ տը տա րի Ծի ւընդ ցայ յ, եա րիս տես սայ լա ւըն ցայ ... :
- Օխ տը տա րի Ծի ւընդ ցայ յ, եա րիս տես սայ լա ւըն ցայ .
- Օխ տը տա րի Ծի ւընդ ցայ յ, եա րիս տես սայ լա ւըն ցայ .

ԱՊԵՐՊԱՆ

ՄԱՆԶ Հա՛պրպան

ԱՂՋԻԿ Ճան է ճան.

ՄԱՆԶ Հապրպանը նստել ա,
Սինամ սարը մըթնել ա,
Հապրպանը նըստել ա,
Սինամ սարը մըթնել ա

ԱՂՋԻԿ Հա՛պրպան

ՄԱՆԶ Ճան է ճան,


ԱՂՋԻԿ Մողնըվայ ջուրը լողայ,
Մողնըվայ շուշէն գողայ,
Օխտը տարի հիւընդցայ,
Եարիս տեսայ լաւընցայ:


ՄԱՆՉ Մողնուայ ջուրը սառն ա,
Մողնի Էթողն իմ եարն ա,
Թող էրթայ մուրազն առնի,
Ետ դառնայ սիրածն առնի:

ԱՂՋԻԿ Ալագեազը ծընել ա,
Եարըս տակին քընել ա,
Զէն կուտամ ձէնըս չառնի,
Էս ի՞նչ անուշ քընել ա:

ՄԱՆՉ Սիրել եմ՝ սէրն երեսին.
Անթառամ թերն երեսին,
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Աստրծու կերն երեսին :

ԱՂՋԻԿ Սարի Թրթնջուկի թազա,
Մեղը ու շաքար քեզ մազա,
Ինձ պէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տըղին ո՞նց սազայ:





Ա. ՓՈՐԹ ԻՒԿԱԼԻԱՆ



ՄԻՈՒԹԻՒՆԸ ԶՈՐՈՒԹ. ԻՆ Է

Հաներն իտու-համ եռլիսքէն վար կը թափին,
Բայց ելք կ'իշնան, մողմալ կասեն ընկերին,
Գո՞ւն ալ, եռ ալ, թոյլ էակներ չոփ պէս,
Կը համբնք, թէ, չը միանունք պնդապէս.
Մենք սմբենքս մէն ւիւակ ի՞նչ կրնանք, ոչինչ ենք,
Բայց երք մէկտեղ ենք մենք, ւեռն ու դաշտ կը ծած-
կենք:

Անձրեւ կուգայ, զրի փոքրիկ կաթիլներ,
Մէկտեղ կ'իշնեն եւ կը հանեն մեծ ձայն՝ ր.
Կվասեն՝ ի՞նչ կայ աւելի թոյլ քան թէ ջուր,
Բայց միութեանս չի դիմանար նոյն իսկ իուր:
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք, ոչինչ ենք,
Բայց երբ մէկտեղ ենք մենք. մեծ գետեր կը կազմենք:

Քամին փշեց, թէեւ ամառ տերեւներ
Գողդողալով կը փսփառն իրենց մէջ—
Այս քամին մեզ զատ-զատ ամէնքս կը թափէր,
Բայց շատին վրայ կանէ մի ոյն ել եւ էջ:
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք, ոչինչ ենք,
Բայց մէկտեղ՝ մենք մարգերն արեւէն կը ժածպենք:

Նատ տկար են ծիծեռնակներ. բայց խմբով
Կը ճամբորդեն գարնան ատեն ապահով.
Երբ գիշակեր թռչուն տեսնեն, խմբովին
Մեծ աղմուկով կը փախցնեն թշնամին.
Այդ աղմուկ մեզ կ'ասէ՛ մենք մինակ տկար ենք,
Բայց երբ մէկտեղ ենք մենք. արծիւն աւ կը վանենք:

Բնականէն դրուած է այս մեծ օրէնք,
Որ տկարներ, թէեւ չունին ուժ եւ զէնք,
Միանալով զը զօրանան, կը կռւին
Եւ միութեան չի դիմանար թշնամին:
Կը կրկնեն ձիւն, անձրեւ, տերեւ եւ թռչուն,
«Միացէ՛ք, միութեան մէջն է մեր զօրութիւն»:

Մ. ՓՈՐԹՈՒԿԱԼԵԱՆ



Խօսք Պ. Տ. ՄԻՒ.ԱՍԵՍ.Ն.

Եղանակ Մ. ԹԻՐԵԱԿԹԵԱՆ

All-Med. (Tempo di marcia)

Ճ-
Ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ-

Ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ- ճ-

ՍԱՀԱԿ ԱԼԹՈՒՆԵԱՆԻՆ



առաջ, ընկերներ, կազմենք միութիւն,
Մեզ խապաս դրած մեր կամքն անըլուն,
Մեկ սիրս, մեկ հոգի ցնծալով գոչենք՝
Կեցցեն բրոլեդարք, կեցցէ ՄԱՅԻՍ ՄԵԿ:

— Ցոյց տանք, ընկերներ, համայն մարդկութեան
Թէ չե մեր տերը անխիղի պուրժուազիան,
Թէ հալալ վաստակ, ազատ կեանք կուզենք,
Կեցցեն բրոլեդարք, կեցցէ ՄԱՅԻՍ ՄԵԿ:

— Պէսէ է վերջ գտնի մեր դառն տանջանք,
Մենք կը պահանջենք ուր ժամ աշխատանք,
Արդ ժամէ, ընկերք, սրտազին գոչենք՝
Կեցցեն բրոլեդարք, կեցցէ ՄԱՅԻՍ ՄԵԿ:

— Զայն տանք, ընկերներ, արար աշխարհին,
Թէ պէսէ է վերջ տալ պատերազմներին,
Թէ ծագմամբ տարբեր, ողջ եղբայր ենք մենք,
Կեցցեն բրոլեդարք, կեցցէ ՄԱՅԻՍ ՄԵԿ . . .

Պէյրուր

ՊԵՏՐՈՍ ՏԵՐ ՄԻՒՍ.ՍԵՍ.Ն

ՊՕՅԸ Դ ԲԱՐՁՐ



Պ, օյըդ քարձր սալվի չինար,
Աչքդ նաշխուն, ունքդ կամար,
Դուն ստեղծւելի ես ինձ համար,
Անգին ծաղիկ ես նոր բուսած:

Գոյնդ նման է մարմարի,
Հագիդ շորերն է յարմարի,
Դուն ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Քեզ չտեսնելը ինձ մեծ մահ է,
Հոգիս իանեմ քեզ տամ պահի՛.
Ինձնում եղած ինձ ի՞նչ շահ է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած,

Գիշեր ցերեկ նստած լալով,
Աղի արտասունք թափելով,
Ինձ թողել ես տանջուելով,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

Ես քեզ տեսայ ծաղկանց միջին,
Աղաչեցի ես իմ փրկչին՝
Որ չի կտրէ յոյսն իմ վերջին,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:



ԱՆՏԻԳՈՆԵ

Ա Ն Տ Ի Գ Ո Ն Է



անգնած ուղղածից կարծես կ'աղօթէ
Գիշերին մէջ լուռ. Թախծութեամբ յե-
տին ,

Ամէն բան շուրջն իր սեւ ու աղօտ է
Ծովն ալ կը մնչէ խաղաղ՝ իր ետին:

Զեռքը կուրծքին վրայ հանգչեցուցած լուռ,
Պիշ կը նայի վեր իղձով մ'անյագուրդ.
Ո՞հ, ի՞նչ խոր հայեացք, հաւատքի ինչ հուր,
Հեթանոսական ինչ մըռայլ խորհուրդ:

Գիշեր է խորունկ, պահն է երազի.
Մաքուր եւ վընիտ նայուածքն իր անծէս,
Սնիունին մէջ լուռ կը խորասուզի
Ու սըրտի բաղձանքն համըր է կարծես:

Արձանացած է մօտ ծովի ափին'
Նիւթացած որպէս ցաւ մը մարմնեղէն,
Կարծես հովերն ալ իրմէ խուսափին.
Աստղերը միայն վար լոյս կը մաղեն :

Աչքերը կ'ըմպեն անոնց լոյսն անգին,
Աչքերն, որոնց մէջ ցաւն է խտացեր,
Բայց հերոսական անկաշկանդ հոգին
Իր մէջ կը ծնի դիւցազ մ'անվեհեր:

Կիսալուսինն ալ աղօտ կը փայլի
Լուսաւորելով դէմքն իր աղջկան,
Սիրտը ցաւերով, յոյզերով առլի
Տըրոփէ, բայց իոն երկիւղ, վախ չը կան:

Ո՞հ, գըթացած չէ աստուած մը գոնէ,
Կուսական կարծես իր սըրտին, աւա՛ղ,
Ու հիմա նայի լուռ, Անտիգոնէ
Նէնշող աստղերուն կամ լուսնին նըւաղ:

* * *

Կանգնած ուղղաձիգ կարծես կ'աղօթէ
Գիշերին մէջ լուռ. Թախծութեամբ յետին
Ամէն բան շուրջն իր սեւ ու աղօտ է.
Ծովն ալ կը մընջէ խաղաղ' իր ետին:

ՄԱՐԶՈՒԱՆ

Ա. ԱՅԳԵՆՑ

ՈՒՍԱՆՈՂ

Երբ որ հողից մարդ դարձայ,
Երբ Աստուածանից հարայ,
Թէ՛ ի՞նչ վիճակ ես ուզում.
Ասի՛ ուսանողութիւն:

Աստուած ուզեց զարդարել
Ինձ, դիպայ շորեր կարել.
Ասի՛ էն դու կանանց տո՛ւր,
Ինձ մի նշանազգեստ տո՛ւր:

Կապտածըղի գըդակ տո՛ւր,
Մէջքէս կապէ՛ հատու սուր,
Մառանումս լաւ գինի
Թո՛ղ միշտ անպակաս լինի:

Իմ սիրելի նազելին
Մնայ ինձ միշտ հաւատարիմ.
Փըղըշացի ախոյեան
Տե՛ս ի՛մ սուրն է իմ պաշտպան:

Ով չի եղել ուսանող,
Լաւ է, որ միշտ մընար իող,
Քանց Աստուծոյ լոյս արեւն
Անասնոց պէս վայելէր :

Ով չի կոնծել երգելով,
Ընկերաց իետ պաշուելով,
Նա չը գիտէ ցնծութիւն.
Եղուկ սրտին, վայ իոգո՞ւն:

Ով չի երդուել ընկերաց
Պաշտպան լինել հայրենաց,
Վերջին արիւնը թափել,
Հայրենիքը ազատել,—

Մեզնից էնպէսն հեռանայ,
Լոյս աշխարհից վերանայ.
Թո՛ղ անասնոց կարգն ընկնի.
Թող մեր մէջ նա չի մըտնի:

Յօվիսակ Յնք. Չալլունան

Խ ար տի մեռ սրբ եր քա սրբ և պիր դու քո ծուած կեռ լիս
կուա ան կա ու կիր դու մատաղ հոգ տոյս երա զա նին ան բան
սի ար մեռ սրբ և մի տրոտ միր թք նաւ թք նաւ բա մին իմ ար տիր
ան Հո գեր բո լոր ժր սիրտ նոր կուզ զեն մոզ աղջ կունք աղ տոր ես զը տու
բա սիմ ըու դարաւաս կը նաւ զու ծա ցի և ու կոն և ու տր տուած եր զեն

ՀՈՒՍԿ ԵՐԳՆ ԱՂՋԿԱՆ



Ա պիտի մեռնիմ, երջանիկ եղիր,
Դու իիւծուած կեանքիս կուռքն անկարեկիր,
Դու մատաղ իոգւոյս երազանք անբաւ,
Պիտի մեռնիմ ես, մի՛ տրտմիր բընաւ:

Բաժին իմ սրտիս սեւ իոգեր քոլոր,
Ժպիտներ կուղղեն քեզ աղջկունք աղւոր,
Ես կը տառապիմ, դու դարպաս կ'ընես,
Դու ծաղկի կոկոն, կոտրտած ճիւղ՝ ես:

Քու ճամբուն վրայ խնդութեան ծիծաղ
Խոկ իմ չորս կողմըս դառն կոծեր, աւա՛ղ,
Վառ սրտիդ սընունդ ճառագայթ, արեւ,
Մըռայլ ստուերներ իմ գլխուս վերեւ:



ԵՒՓԻՄԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ

Լոյս տաճարին մէջ քեզ քիչ ատենէն
Ոսկեթանգ նարօտ մը պիտի դնեն,
Շողշողուն ջահեր, երգեր ու բռւրվառ,
Զերմ ուխտը սիրոյդ պիտի օրինեն յար:

Իսկ զիս կոշտ մարդիկ մութ գիշերին մէջ
Պիտի տանին հոն' ուր ալ կիրք ու տենջ,
Սէր ու տառապանք, արցունք ու հառաջ
Կ'անհետին ու լոկ կը մընայ սեւ խաչ:

ԵՒՓԻՄԷ ԱԻԵՏԻՍԵԱՆ

ՎՐԷԺՔ Ի ՇԱԽԱՐՇԱՆ



ամբ, որոտան քարձուստ քոմբիւնք Արարատեան
դաշտն ի վայր,
Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի
հրազայր,

Հրաւէր Հայրենեաց իոչակի 'նդիանուր,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի իուր.
Որք Երկնաւորին պսակին էք կարօտ,
Որք Երկրաւորին փառաց երկնայորդ:

Հապօն, արի արանց մանկունք
Հայրենավ ըէժքդ Հայկազունք:
Հապօն, ի զէն գունդագունդ,
Յեռեալ 'ի պար թունդ 'ի թունդ.
Ի զէն, 'ի վրէ՛ժ, օն անդը յառաջ,
Ի զէն, ի վրէ՛ժ, մի ծախ, մի յաջ.

Օ՞ն անդը յառաջ
Մի ծախ մի յաջ,
Օ՞ն անդը յառաջ,
Յառաջ, յառաջ,
Հապ՝ օ՞ն յառաջ:

Հայկեան փանդռանց որոտընդոստ դոնչին քարբառք
մարտագոռ
Դառնագոռոց անդրածայնէ պարսիկ կերկերն ի շեփոր,
Շարժին հրեշտակը թեւս լուսափողփողս,
Ճիւաղք ճիւաղաց կայտուն ի դժոխս,
Շոհնդն շանթառաք զեթերօք փարի,
Սարսափին սանդարք 'ի խոլ խաւարի:
Հապ օ՞ն, արի արանց մանկունք, եւայլն:

Մամիկոնեան սաւառնեցաւ դրօշն յայերս գոգ ծալի
ծալ,
ի ճակատուց 'ի թշնամեաց' սա ոչ գիտաց յուրաստ կալ,

Հեծեալ հրանժոյգ վեհին Վահանայ'
Վրէ՛ժ կանչէ արեան Կարմիր Վարդանայ,
Փռնչեալ բոցաշունչ տափիր 'ի գարշապար,
Ռազմամուտ վարժի յանժոյժ երիվար:
Հապ' օ՞ն, արի արանց մանկունք, եւայն:

Ի գուպարել մարտայարդար գարշապարաց Արամայ,
Գոռան Կորդրիք, Մասիս սարսին. հոնչեն սահանք - Ե
րասխայ

Ի գրոի. 'ի գրոի տալ բուրոցն ոտնատրոփ,
Տատանին դաշնակք' յառնէ շռինդն ապշով,
Կռուփ առ կռուփ կռփեն կըմբայք տէգ առ տէգ,
Դղորդ առնուն տարերք' կորովեացն ի վէգ:
Հապ օ՞ն, արի արանց մանկունք, եւն:

Արի՛ք 'ի կոիւ քաջակորովք ընդ կորակոր հրոսն
Արեաց,
Հապա՛ համիարզք մեր բիւրայաղթք ձեզ նոր հանդէսք
ին փառաց.

Թռի՛ք 'ի ռազմ, 'ի խազմ, առէ՛ք զէն եւ զարդ,
Երեսնիւք, յըսնիւք հարուլ բիւրս հազարս.

Ի սուր 'ի սուսեր, կարշնեղ յաղեղունս,
Ըզսեաւ Սասանեանց ջարդել կառափունս:

Հապ օ՞ն, արի արանց մանկունք, եւայն:

Մինչեւ ցե՛րք, ցե՛րք սուգ լինի 'ի Հայս, հատէ՛ք զար-
տոսր որբք, այրիք,
Հարանց, հարսանց, եղբարց, որդւոց, հանուրց հայոց
Վրէժինդիրք.

Թինդս առեալ երթամքյասպարէզ քաջաց.

Յուշիկ հնչեն ձայնք արեան սիրելեաց.

Սոսափիւնք վերինք, արիաւիրք յերկրէ,

Քաջացն օժանդակ, զպարս հերքեսցէ:

Հապ օ՞ն, արի արանց մանկունք, եւայն:

Օ՞ն անդք, ի բաց հայկեան հողոց հսկայագանց եւ սր-
բոց,

ի բաց ջոլիր չուառական մոխրապաշտիցն պղծոց:

Դաշտք մեր մերժեսցեն զոսկրոտին, անգամ
Արիւնք վկայից զճապաղիսն անժամ,
Ոտն ընդ դիս տոռնեալ դարձցին ի փախուստ,
Մատնակուրծք ընդ Հայս հայեսցին իեռուստ:
Հապ օ՞ն, արի արանց մանկունք' եւայլն:

Արք աղեղանց բարձր ի թիրախ թոռուցի՛ք, վերջին
ձեզ խրախոյս,
Առեալ տարցուք զանթիկնադարձ զայս վարդագոյն
դրօշն անխոյս:

ի վերայ յիսնից յաղթից Վարդանայ,
Պարսկավան բազկաւ արւոյն Վահանայ,
Նեշտ ի ծայր շիրմի դաշտին նաւարշան
Տնկել յաղթանակ անմահ յաղթութեան:

Հապ օ՞ն, արի արանց մանկունք

Հայրենավրէժքի՛ Հայկազունք:

ի նաւարշան գունդագունդ

Յեռեալ ի պար թունդ ի թունդ ,

ի յաղթանակ. օ՞ն անդք յառաջ

Օ՞ն անդք յառաջ

Մի ձախ մի, յաջ ,

Օ՞ն անդք, յառաջ

Հապ օ՞ն յառաջ

ի յաղթանակ . . .

Հ. Պ. ԱԼԻՇԱՆ



Allegro moderato

The musical score consists of three staves of music in common time (indicated by '6/8'). The first staff has a treble clef, the second a bass clef, and the third a tenor clef. The lyrics are written below the notes in Armenian. The vocal parts are separated by vertical bar lines, and there are two endings indicated by '1.' and '2.' at the end of the piece.

Զօյ նազանըմ, նազանըմ,
նրմ, նազանըմ, նրմ, գիւլ նրմ.
նրմ, նազանըմ, եսր ջան, դուն բա բով. է կար, կա նուն կա լի
բով է կար, կար միր է, աօ լի բով է կար, բով է կար.

Հ 0 3 Կ Ա Զ Ա Ն Ը Մ



օյ նազանըմ, նազանըմ,
կիւլ նազանըմ, նազանըմ,
եարջան, դուն բարով էկար,
կանանչ կալերով էկար,
կարմիր սոլերով էկար:

Աղջի', մազերդ մուխ է,
էս ի՞նչ պարութի մուխ է,
Մուխ անողը քոռանայ,
ինծի քեզի մոռանայ:

Զօյ նազանըմ եւն . . .

Մեխակի ծառ եմ տնկել՝
Քեզ համար իիւանդ ընկել,
Օխտը տարի տեղումըս
ես մի կըշտի եմ պառկել:

Զօյ նազանըմ եւն . . .

Կիւլս կիւլումա դառել,
Եարըս լէյլում ա դառել,
Ո՞նց ասեմ ոք հասկանաք—
Մի հատ զուլում ա դառել:

Հօյ նազանըմ եւն . . .


ԵՐԳ ՊԱՆԴԻՏԻ

Ծիծեռնակ, ծիծեռնակ, դու գարնան սիրուն
Թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա, Թռչում ես այդպէս արագ:
Ա'խ, Թռիր, ծիծեռնակ, ծնած տեղս Աշտարակ,
Անդ շինիր քո բոյնը, հայրենի կտուրի տակ:

Անդ հեռու ալեւոր, հայր ունիմ սգաւոր,
Ոք մինակ իր որդուն սպասում է օրէ օր:
Երբ տեսնես դու նորան, լնձնլ ց շատ բարեւ աբա',
Ասա' Թռ'ղ նոտի լայ, իւր անբաղդ որդու վրայ:

Դու պատմէ՛ թէ ինչպէս աստ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝ կեանքս մաշւել, եղել կէս:
Ինձ համար ցերեկը՝ մութ է շըջում արեգը,
Գիշերը Թաց աչքիս, քունը մօտ չի գալիս:

Ասի՛ր, ոք չի բացւած՝ Թառամեցայ մենացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝ հայրենի հողից զրկւած:
Դէ՛ի, սիրուն ծիծեռնակ, հեռացիր, Թռիր արագ,
Դէպի հայոց երկիրը ծընած տեղըս-Աշտարակ:



Արքայի առաջնորդութեան ամենամեծ
պատուած աշխարհական աշխարհական
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ բան զան քան բան

ՆԱԶԷՒԻ ՕՐՕՐԸ



Նի՞ր իմ բալիկ, օրօր եւ արա',
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել.
Կոյր կռունկները սուգ ու շիւանով
Մեր սեւ երկնքից եկան անցկացան,
Ախ, մեր լեռներում, նրանք կուրացան:
Դու լաց մի՛ լինիր ես շատ եմ լացել:

Հողմն է հեծեծում սեւ անտառներում,
Անտէր մեռելի սուզն է այն բալի'կ,
Անտէր ու անթաղ մեռելները շա'տ.
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:

Կարաւանն անցաւ, բարձած արցունքով,
Սեւ անտառներում ծունկ չոքեց մնաց.
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն է.
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել

Յուլունք եմ շարել, կապել օրօքիդ՝
Զար աչքերի դէմ մեր չար տուշմանի —
Քնի՛ր ու աճիր, շուտ արա՛, բալի'կ,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:

Դալուկ շըթունքիդ իմ կաթը սառեց.
Գիտեմ, այն դառն է, չես ուզում բալի'կ —
Ախ, վշտիս թոյնն է քամւել նրա մէջ . . .
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել:

Կաթիս իետ մէկտեղ սեւ վիշտը ծծիր,
Հոգուդ մէջ թո՛ղ նա սեւ վըրէժ դառնայ.
Ծլի՛ր, քոյ քաշիր, քոյի՛դ ես դուրբան,
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել . . .

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ





իութեան սուրբ գրօշակը,
ասիս լեռան կատարից—
Ծածանում է դէպի երկինք,
Փողփողելով հրճուալից . . .

Հնչակ, Դաշնակ մէկ-սիրու մէկ հոգի դարձան
Հայոց դաշտու լերինք, նոր կեանք-ստացան.

Նայեցէք ինյը այն գրօշին,
Մեզ կանչում է կռուի դաշտ ,
Միութեան անմահ իոզին—
Մեզ օրինում է ջերմ առատ:

Հնչակ, Գաշնակ եւն . . .

Դիմենք յառաջ մենք անվեհեր,
Մեզ իետ երկնից սերովբէք,
Գունդ-գունդ իշել հուը ու սուրով,
Ազատելու հայրենիք :

Հնչակ, Դաշնակ Եւն . . .



ՏԱՐԱԳԻՐՆ

Ղնդաստեղօք օտար ափանց
Տարագրելոյս չիք բերկրանք,
Լքեալ հոգւոյս, յոյս Հայրենեաց.
Դու ես միայն սփոփանք.

Օտար աստղեր լոյս չունին.
Օտար երկինք ինձ մթին:

Օտար բոյսեր դառն ու անհամ,
Զրեր պղտոր ու լեղի,
Դաշտք, անապատք, հոգիտք, արտեր
Ու պարտէզներ անքերրի:

Օտար ծառեր շուքչունին.
Օտար ծաղիկք հոտ չունին,

Օտար երկիր երջանկաբեր՝
Ծանը այդ պայման ինձ համար,
Զիւն նմեռ են իւր գարուններ,
Չունի երբէք ինձ ամառ:

Օտար երկինք ամպոտ են,
Օտար սրտեր անգութ են:

Օտար վայելք բերեն ձանձրոյթ
Եւ պատիւներ անարգանք,
Ռսկի, արծաթ. սէր եւ գութ
Հայրենադրոյժ են պատրանք:

Օտար ռսկին շղթային
Օտար պալատք ինձ մթին:

Օտար Թէեւ շնչեմ ես օդ,
Ցաւօք սահին իմ օրեր,
Քեզ, Հայաստան սիրակարօտ,
Սիրտս համայն քեզ նուեր:

Օտարութիւն, դու փուշես,
Այլ, հայրենիք, դու վարդ ես :



Եթէ ԳԱՐՈՒՆ ԸԼԼԱՅԻ



Ղս, Թէ գարուն ես ըլլայի
Կանաչազարդ ու փթթուն,
Ծաղիկներէս գոյն կը տայի
ՆԲԱ. դալուկ այտերուն:

Թէ խոր երկի՞նք մ'ես ըլլայի
Վա՛ռ աստղերով զարդարուն,
Փայլուն ցոլքեր կը կաթէի.
ՆԲԱ. տամուկ աչերուն :

Թէ վարդե՞նի մ'ես ըլլայի
Կոկոններով զարդարուն,
Անոնց բո՛յրը փոխ կըտայի
ՆԲԱ. բուստէ շրթերուն:

Ինկ Թէ կրա՛կ մ'ես ըլլայի
Մշտաբորբոք ու անշէջ ,
Տաք բոցերով կը շնչէի
ՆԲԱ. սառա՛ծ հոգւոյն մէջ . . .



ԱՐՈՅՍ ԱՆԴՐԻՆ



ՍԻՐՈՅԱ ԽԱԳՐԻՆ

Հ. Արտամեոնցին



մ անդրիին՝ աստղերէն զոյգ մը աչեր ագուցի,
Կամար յօնքեր գլուխեցի գոյնովը թանկ արջասպի,
Ընդլուզեցի ֆանոնէ մարգարտայեռ ատամներ,
Երթունքներն ալ Սէյլանի թանկ բուստերով շինեցի:

Եօթը սարեր արածող սէւ ոչխարի բուք կաթով
Երպարեցի դէմքն անոր, հարըստութեամբ կընաթով,
Փայլ մը տըւի բումբերուն եւ ուսերուն ձիւնագեղ
Եղավարդով հըրանոյշ դըրասանք մ'ալ կապելով:

Արաբական, հնդկական անուշահոտ իւղերով
Իրանն ամբողջ օծեցի, յափշտակուած իր սիրով,
Եւ ծաղիկներ հաւքելով աշխարհի հինգ ծագերէն
Անոր դիմաց թափեցի եօթ գարուններ շարունակ:

Նըւագեցի օրերով, եւ թրթռագին լարերէ
Կաթիլ կաթիլ կարծես թէ իր մեղկ սէրը կը ծորէ,
Մինչ այն ատեն իմ մէջըս՝ նեմեսիսը արթնցաւ,
Փոխան սիրոյս անդրիին՝ զայն կեանքիս դէմ կանգնեցի:

Մերաստիա

Ա. ԶՈՒԳԱՍՏՐԵԱՆ

Եղանակ ՍինԱՆԵԱՆ

Allegro Moderato

The musical score consists of three staves of music. The first staff uses a treble clef and a 6/8 time signature. The second staff uses a bass clef and a 3/4 time signature, with a key signature of one sharp. The third staff uses a treble clef and a 2/4 time signature, also with a key signature of one sharp. The lyrics are written below the notes in Armenian. The first line of lyrics is: "Երբ ըստ մենք մեծնանք Պեխեր ունենանք". The second line is: "Պիտի ուզենք որ Ընեն մեզ զինուոր". The third line is: "Ըլլալ անվեհեր, Պահել մեր կարգեր, Այժմէն պիտ' սորվինք Որ լաւ մը կռուինք". The fourth line is: "Հրացան ուսին Թուրը մեր մէջքին, Խրոխտ քայլերով Պիտ' քալենք սիրով". The fifth line is: "Մենք պիտի բաղձանք Որ մերին պարծանք Ըլլայ յաղթութիւն Եւ ոչ պարտութիւն". The sixth line is: "ԶԱՊԵԼ ԶԱՔԱՐԵԱՆ". The score concludes with a final measure ending with a fermata over the last note.



Երբ ըստ մենք մեծնանք
Պեխեր ունենանք,

Պիտի ուզենք որ
Ընեն մեզ զինուոր:

Ըլլալ անվեհեր,
Պահել մեր կարգեր,
Այժմէն պիտ' սորվինք
Որ լաւ մը կռուինք:

Հրացան ուսին
Թուրը մեր մէջքին,
Խրոխտ քայլերով
Պիտ' քալենք սիրով:

Մենք պիտի բաղձանք
Որ մերին պարծանք
Ըլլայ յաղթութիւն
Եւ ոչ պարտութիւն:



ԱՐՑՈՒՆՔԵՎԵՐՁ

Աշուակեսիս ԳԱԳԻԿ ՕԶԱՆԵԱՆԻՆ



Ե՛ ԵՐԿԻՆՔՆ ալ տըժգոյն ԵՐԿԻՆՔՆ իմ հոգ-
ւոյս պէս

Արցունքէ վերջ

Ցոլք մ'ունի պերճ,

Մոխիրէն վերջ, կայծ մ'աննկուն ո՞հ դառնապէս:

Արշալոյսի դեռ նորածագ այգն ալ վըսեմ,

Արցունքէ վերջ,

Ցոլք մ'ունի պերճ

Ստուերէն վերջ, պարգեւ մ'ալու քաղցըրադէմ:

Մօրկան աչեր, արտօսրալից ծաղկանց մի յոյս

Արցունքէ վերջ

Ցոլք մ'ունին պերճ,

Կսկիծէ վերջ, ծիծաղ մ'անհուն քաղցըրալոյս:

Երկիրն ալ ո՞հ՝ մութի ծաղիկն սրտեր ցնցող,
Արցունքէ վերջ,
Յոլք մ'ունի պերճ,
Մութէն ալ վերջ ոսկի փունջ մը լուսացնցուղ:
Գեղարուեստներ, էջեր սիրուն, շինջ, լուսաւէս,
Արցունքէ վերջ,
Յոլք մ'ունին պերճ,
Յոյզէ մը վերջ, քաղցըր ժպիտ' յոյսի մը գէթ:
Կեանքն ալ տխուր, տառապանքի լացող Վիշնուն,
Արցունքէ վերջ.
Յոլք մ'ունի պերճ,
Պղտորէ վերջ՝ ջուր մը վընիտ, սիրազեղուն:
Մահուան շիթն ալ' ստուելն մթին անցանցման,
Արցունքէ վերջ,
Յոլք մ'ունի պերճ,
Վիշտէ մը վերջ, անդորրութեան հանգիստ վայր-
կեան:
Արիւնն ա'լ, ո՞հ, ճապաղիքնե՛ր կարմիր արեանց,
Արցունքէ վերջ,
Յոլք մ'ունին պերճ,
Յամքելէ վերջ'... նորաբողբոշ'ծիլմաննախանձ...:

Մ. ԲՐՈՒՏԵԱՆ

Մարզուան. 908 Յուլիս 11.



ՄՈՄԻՆ ՓԱՐԱՆ



Եր պապերը դարեր առաջ թողուցին.
Կուռք ու մեհեան. կրակ տուին՝ ազգային
Մեր պատմութեանց, որ չը մնայ յիշատակ
Հին օրերէ, քառամեւիդ շուքին տակ:
Խաչիդ յառած ա՛լ աչքերնիւ՛ շարունակ,
Մենք թողուցինք սուր, իրացան ու գնդակ.
Ու անկորով ազգ մը եղած՝ այն օրէն
Լալ ու ողբալ գիտցանք միայն մեղկօրէն:

Դժոխքիդ վախ, Արքայութիւնդ երկնային
Գրաւեցին համակ ուշը մեր Յեղին.
Գալիք վառքով, գալիք վախով՝ միտք ու խելք
Յափշտակուած, մոռցանք ներկան ու վայելք:

Մեր սեւազգեստ կղերները մեզ ըսին.
«Մէկ երեսուուդ երբոր զարնեն, դուք անդին
«Դարձէք անխօս, որ միւսին ալ՝ պերճօրէն
«Փրկչական նոյն շախշըռախը շնորհեն:

«Գայլին առջեւ դուք ոչխարը եղի՛ք միշտ,
«Եւ կամ կատուին եղէք մուկը ճիշտ ու ճիշտ.
«Հոգ չէ ձեզի թո՛ղ բզըքտեն, իերիք որ
«Ժառանգորդն էք ա: Արքայութեան երկնաւոք»:

Ըսին անոնք, ու մենք յօժար սուր երկաթ
Գէն նետեցինք. առինք ոսկի ու արծաթ
Ու շինեցինք սըկիի, քըշոց, խաչ, բուրվառ, ։ ։ ։
Ծնծղաներով քեզ օրինելու դարէ դար:

Քեզմէ ի զատ'. Յոյն թէ Լատին' ջերմօրէն,
Միւրիս ներդ ալ պաշտուեցան մեր ցեղէն.
Դուքս չը մնաց ո'չ սուրբ Դէօրգ, ո'չ Մինաս
Ո'չ Սուրբ Սարգիս, ո'չ Կոմիտաս, Բառնաբաս :

Տաճար կանգնել, վանքեր շինել հոյակապ,
Աս եղաւ մեր օրուան հարցը հրատապ:
«Հոգ չէ փլի ազգին տունը փառայեղ.
Եկեղեցի մենք կը կանգնենք անոր տեղ»:

Ըսիք. «Մեզի պէտք չէ' իշխան, թագաւոր,
Փրկի'չն է մեր թագաւորը երկնաւոր»:
Շուքին ի տես մանք՝ պատառը պատրաստի
Կորսնցուցինք երազներով սնոտի:

* * *

Հիմակ եկուր, հաշիւ տեսնենք, ո'վ Փրկիչ,
Փրկիչ մը որ փրկող չեղար, ալ քանդիչ
Բռնակալին թիկունք կ'ըլլաս, որ սըբեն
Հայ անունը երկրագունդիս երեսէն:

Քեզի' ըլլան եկեղեցի, վանք, խորան,
Միայն թէ սա վառուած մոմին տաս փարա՞ն .
Խունկ ու կնդրուկ, ծնծղայ, քշոց, միշտ քեզի,
Քեզի' ըլլան. մոմին փարան տուր մեզի:

Պետութիւններ կը կազմուին, դրամով'
Զոր մսխեցինք առջիդ մոմեր վառելով:
Մեզի պէտք է այդ դրամը տուր կ'ըսեմ
Տուր' կը ճըւամ գերեզմանիս սա սեմէն:



ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ

Զե՞ս տար ամբողջ, գիտեմ որ դուն չես Քաւոք.
Ճարտարւորէ՛, հայտէ՛ նայիմ, կէ՛սը տուք.
Կէսին կէսն ալ քաւէ մեզի, տո՛ւք միայն.
Սիա քեզի քօնքը տա մը եզական:

Քսան իինգով մաքրէ հաշիւդ հայուն իետ,
Գիտես որ սա պահանջ մը չէ անհեթեթ:
Բայց կը խոսկամ լռութենէդ . . . իա՛, ասա՞նկ,
Չես քաշուիր դու իռչակուելէ Մե՛ծ Սնանկ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱՔՐԵԱՆ



ԵՍԿՈՒԶԵՄԿՐԻԵԼ



Երիք է, մայրիկ, ոու ինձ փայփայես,
Հերիք է, մայրիկ, ինձ կրծքիդ սեղմես,
Ես կուզեմ ջարդել շղթան բռնութեան,
Ես կուզեմ կռւել, ես կուզեմ մեռնել:

Հասակս քանի ոսքուց սնց կացաւ.
Միրտս վրեժով լիքը լիցուեցաւ.
Զեմ ուզում տեսնել եղբայրս թշուառ,
Ես կուզեմ կռւել, ես կուզեմ մեռնել:

Կացով չեմ կարող փրկել հայրենիք,
Մայրիկ, ինձ պէտք է ձի, ոուր հրացան.
Զեռներս ծալած չեմ կարող նստել,
Ես կուզեմ կռւել, ես կուզեմ մեռնել:

Համիան ունի գործեր մեզի հետ.
Մեզ կոտորում են, մեզ թալանում են.
Հերիք է, մայր իմ, չեմ կարող լուել,
Ես կուզեմ կռւել, ես կուզեմ մեռնել:

Դիշեր ու ցորեկ կուլամ աճափ իմ եարն կու լսէ՞
Այնչափ ողարմուկ կուլամ, աչերուս արիւն կու կաթէ.՝
Այ, իմ հեռացած եարէն ով ինծի խապար մի ըերէ,
Հաշուէ զիմ ելած հոգին. դարձուցեր ՚ինծի կու ըերէ:

$$L \models \Phi 0$$

A handwritten musical score for soprano and piano. The score consists of four staves. The top two staves are for soprano, and the bottom two are for piano. The key signature is B-flat major (two flats), and the time signature varies between common time and 6/8. The vocal line features lyrics in Russian, such as 'Лю-ди' (Lyudi) and 'Со-всеми' (Sovsemi). The piano part includes dynamic markings like 'pp' (pianissimo) and 'ff' (fortissimo). Measure 11 ends with a repeat sign and a double bar line. Measures 12 through 16 continue the melody and lyrics.

950



աղե՛ք, տեսէ՛ք ո՞ւ է կերել զէ՞ծ,
Գաղին տեսան գէլն է կերել զէ՞ծ,
Գէն ըզիծուն, է՞ն ըզալուն, ովհի զարեւուն,

Հալալ է կրօն, հալալ է հալալ է ջամօ հալալ է,
ևս ի՞նչ քետիուր դարու հասանք հ ուրալ է.
ևս ի՞նչ խըտաք կրօն ստացանք հալալ է.
Գէ' գնա՛ կիգամ, դէ՛ գնա՛ կիգամ շուտ կիգամ,
Կարմիր սօլերս հագնիմ իգամ, շուտ կիգամ:
Գացէ՛ք, տեսէ՛ք ո՞վ է կերել զգէլ.
Գացին տեսան արջն է կերել զգէլ,
Արջն զգիլուն, գէլն ըզիծուն, էջն զոկուն, տիկ
զարեւուն

Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ հալալ է,
էս ի՞նչ քեափուր դարու հասնք հալալ է,
էս ի՞նչ խըտար կրմօ ստացանք հալալ է:
Նազ մի' աներ, Նազ մի' աներ, Նազ աղջիկ:

Մինթանովդ Թոզ մի' հաներ, շան աղջիկ:
Նազ կու էնէմ կու, նազ կու էնէմ կու,
Նազ կու էնէմ, նազ կու էնէմ, շան տղայ,
Մինթանովս Թոզ կու էնէմ, շան տղայ,
Խօրօտի'կ, խօրօտի'կ, խօրօտիկ մօրօտիկ իմ եարն է:

Գացէ'ք տեսէ'ք, ո՞վ է կերել զարչ,
Գացին տեսան առիւծն է կերել զարչ,
Առիւծն զարջուն, արջն գգիլուն, գէն զիծուն,
Էծն զտկուն տիկ զարեւուն,
Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ, հալալ է,
Էս ի՞նչ քեաֆուր դարու հասանք, հալալ է,
Էս ի՞նչ խըտար կրմօ ստացանք, հալալ է:
Ծառը ես եմ, բարը դու ես, Աննա ջան,
Սրտով սիրած եարըս դու չես, Աննա ջան.

— Ծառը դու չես, դու, ծառը դու չես, դու,
Ծառը դու չես, ծառը դու չես, շան տղայ,
Սրտով սիրած եարըս դու չես, շան տղայ:
Խօրօտիկ, խօրօտիկ, խօրօտիկ—մօրօտիկ իմ եարն է,
Գրիգորն իմ, Գրիգորն իմ ձեր մայլեցի Գրիգորն իմ..‘



ՀԱՅՐԵՆԻՔ



Որբոր լինի գարնանամուտ նոր գարուն
Կը բազմանան վըտակներդ, հայրենիք,
Ճար ի շար ցնծութեամբ որգելով զը-
ւարթուն

Նարժում են խմբակներդ, հայրենիք:

Օդըդ սիրուն, ջուրդ սիրուն դու սիրուն
Պէսպէս գոյնով ծաղիկներդ գալարուն
Չեն դադարիր աշխատելով օրն ի բուն,
Քու հարազատ մշակներդ, հայրենիք:

Դու դրախտ ես, քեզի սուրբ գիրքը վկայ,
Քո միջիցը անմահութեան հոտ կուգայ
Ճազար ափսո՞ս լուսաւորեալ չեն հիմայ
Ժողովուրդդ, զաւակներդ, հայրենիք:

Արիւնաներկ պատերազմի դաշտերը
Չեն վարժուիր երախտապանծ քաջերը.
Մըրիկներ տարագրեց քոյ ծոցը,
Աստանդական թափառական հայրենիք:

Նատ սարիներ շատ ամիւներ շատ օրեր
Կը տեսնուին քո դաշտի մէջ քաջ զոհեր,
Կուզեն մեռնիլ քո եղբայրներ, քո քոյրեր
Զքեզ տեսնեն, ո՞հ ցանկալի հայրենիք:



ԹՈԱԻ ՔԱՂՋԵ

Moderato

Եղինկ. Յիշր. Պ. Չալքրեան

Թրուաւ քա զր ամ պէ րի մէ չ գւայ չայ րէ նիր սր լա ցաւ
ա զա տու թեան տեն չով այ բռւած մար տի վայ րը նետ ուն ցաւ
պայ ծառ աստ զիր խո նար չե ցան դի մա և ու րել չե րո սին
ող ջու նե ցին Հա կա յա կա ն վեհ թը ոիշ թը թար զէ նին .
Բն պէս ով կիան ավե կո ծուած որ պէս ա ռիւծ զշ տա հար
նա դուրս ցատ կեց զերթ փո թո րիկ մց ուն չա լով քա լա բար
աւ ոը սր տում սու րը ձու բռւմ հա ւա տա րիմ իւր ուր տին
նոկ կեց գունդ հրծ և տան նոր ին կատ կե ցին թար գէ նին .

(ՀՅՀակեան “Արծիւ” խմբի խմբավետ բազ Բարգենին)



ուաւ քաջը ամպերի մէջ դէսի հայրենիք սլացաւ,
Ազատութեան տեհնչով այրուած. մարտի վայրը
նետուեցաւ

Պայծառ աստղեր խոնարիեցան դիմունքել Հերոսին,
Ողջունեցին հսկայական վեհ թռիչքը Բարգենին:

ՀԱՅԱԿԱՆ ԱՐՅՈՒԽ, ԽՈՒՄԾԵ

Ինչպէս ավելի աշխատում անգամ առիւծ վայտահար,
նա դուքս ցատկեց զերմ վուժով և բանցայով քաշաբար:
Սէրը սրտում, սուրը ծէռքամակաւում, իւր ուխտին,
երկնից գունու գունու հրեշտակներ ինկորպէցին թարգէնին:

Մաղկափթիթ անդառներում թող ճռւղեն թունակներ
Գովեն, գգուեն քաջ Բաքէնին՝ իւս իր խմբին անձնուեր.
Որ դէմ դրեց ժայռի նման, կուրծքը տուած թշնամուն,
Վայրկենապէս կրակ Թափեց վրաները՝ վատերուն:

Արծուաց երամք զմայլեցան, գետն ընթացքը ժարմանդեց,
երբ հերոսը «Արդարութիւն» գոռաց եւ սուրը շարժեց.
Նա որոտաց ամպի նման իւր ասվեհեր քաջերին՝
«Արիւն, վրէ՛ժ բռնակալին, ազատութիւն թշուաւին»:

ՀԱՅԱԿԱՆ

ՍԻՐԵՑԷ Ք ԶՄԻՄԻԱՆՍ



արդակարմիր գողգոթային վեհ գագաթ
Միշտ փալփլող սիրոյ անշէ՛ջ ճառագայթ,
Դեռ կըսպասե՞ս թափել սրտից քու սըլաք.
Զո՞վ կը հըսկես, վիհ եւ անդո՞ւնդ. Թէ կըմախք,
Որ սեւ ժայռից մէջ մարեցաւ այն բեկբեկ
Բարբառն վըսեմ թէ «ըզմիմիանս սիրեցէ՛ք»:


Ծածկէ ամպով կարմիր կողերդ, Գողգոթայ,
Եւ թող խայտան ցաւոտ ոսկերք սեւ Յուդայ . . . :
Ժանգոտ ու գուլ թուրերն առին կարմիր փայլ,
Նոր կըօնին հետ արեան ուղիսք առին քայլ . . .
Թնդանօթին առջի բոմբիւնն խեղդեց սէգ
Զքաղցը հագագ թէ «ըզմիմեանս սիրեցէ՛ք»:

Մարդազով վատիկանի մըխացին
Մխնելոյզքը, կամարքը «փա՛ռք» գոռացին ,
Փոխ-Քրիստոսք խաչն ըրին դաստակ կացինի՝
Սեւ դըրօշ մը ատելութեան արիւնի,
Դարուց մոխրէն կամ ամպերէն յուսոյ հէք
Զըկեալն լըսել թէ «ըզմիմիանս սիրեցէ՛ք»:

Տնանկին դամբանը կ'անհետի ոտնակոխ,
Տընակին մէջ մարի առկայծ կանթեղն հող,
Այն մութին մէջ նօթի տղեկք կը հեծեն,
Դղեակըն խրախ մինչեւ լոյս ջահք կը հիւծեն,
Հաբուսաին կառք ժխորով կ'անցնի սըրարշաւ,
Հէքին դագաղն իր գերեզմանն լուռ իջաւ . . . :

ԳԵԹՍԵՄԱՆԻՆ իջնող հրեշտակն դալկահար՝
Որ գեղ՝ ծաղիկ՝ արցունք ու փառք չը ճանչնար՝
Նորա ցուրտ գոգն աղքատը սոսկ կ'ըսփոփի,
Ճոխն եւ տընանկ պատանքին մէջ կ'ըլլան մի.
Կայծակնաթեւ, թէ մըռընջեն մըրիկներ
Թէ «սիրեցէ՛ք զ'իրար», իէքն իոս չեն սիրեր:

Պ. ԴՈՒՐԵԱՆ.



Իմ սիրականի կարօտից տարւած՝
Տեսայ փողոցում նըան իմ դիմաց,
Ծով-ծով աչքերը գետին խոնարիած,
Շիկնած ամօթիած բարեւեց կամաց:

Եւ ինչպէս շոքում սառը աղքիւրին
Հանդիպի յանկարծ ծարաւած ճամբորդ,
Հըպի շրթունքով կենսարար ջրին
Եւ ծծէ ագահ այն ջրից յորդ-յորդ.

Ես խենթի նման եարիս գրկելով՝
Պինդ-պինդ պաշեցի աչքերը խորին.
Վայ ինձ—նա գնաց լալով, կրկնելով՝
«Խայտառակ եղայ օրը կէս օրին» :

Ն. ՔՈՒԶՅԱ





Ա Ն Գ Բ Ա Ե Ւ Կ
Դ Շ



ԴԱՐՁԵԱԼ ՓԱՅԼԵՑ



արձեալ փայլեց Սասնոյ գլխին
Ազատութեան դրօշակ·
Կեցցէ հայրենիք գոչելով
Բարձրացրին աղաղակ:

Թնդաց որոտաց ծայներից
Ողջ աշխարհը հայկական.
Խումբ-խումբ կգան հայ զաւակներ
Հայրենիքին օգնութեան:

Գուրգէն, Վահան, Հրայր-Դժոխք,
Քաջ Անդրանիկ ղեկավար
Տալուրիկի լեռներումը
Նըջում էին անդադար:

Սարսափեցին տուշմանները
Մինչ պալատը Համիտի—
Հըրամայեց շուտ կործանել
Կիրքերը հայդուկների:

Ահա անգութ մեր թշնամին . . .
Սարսափելի տեսարան . . .
«Ժամանակ է վըրէժ լուծել . . .»
Գոչեց ծայնը մարտական:

Կըրակ տեղաց հայ քաջերի
Բընակավայր դիրքերից,
Կոտորւեցին թշնամիններ
Ահռելի գնդակներից:
Դայլայիկ

ԶԵՄ ՀԱՒԱՏՈՒՄ



ԶԵՄ ԲԱՒԱՏՈՒՄ ԵՍ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ
ՈՂ ԽՈՍՔԵՐԻՆ ԵԼ ՈՉ ԵՐԴՄԱՆ.
Սուա է սէրը Եղբայրութեան,
Մըտերմութիւն ընկերական:

ԶԵՄ ԲԱՒԱՏՈՒՄ ՍԻՐՈՅ ԽՈՍՔԵՐ
Ա.Ր.Տ.Ա.Ս.Ա.Ն.Ո.Ղ ԳԵՂԵցկուհուն:
Վ.Ը.Կ.Ա.Յ ՔԵՐՈՂ ՀԱԼՈՒՍԻՆ—ԱՍՏՂԵՐ . . .
ԳԵՂԵցկադէմ սեւ ՊԱՀԵՐՈՒՆ:

ԶԵՄ ԲԱՒԱՏՈՒՄ ԲԱՐՈւՍՄ ՄԱՐԴԿԱՆց,
ՃՈԽ ԱՊՐՈՒՍԹԻՆ, ԱՆԻՈԳ ԿԵԱՆՔԻՆ.
ՌԱԿՈՒ ԲԱՆՔԸ ցաւ է ՆԵՐԱՆց
Մըրտին մըտքին, ՆՈՅՆ ԽՍԿ ԽԵԼՔԻՆ:

ԶԵՄ ԲԱՒԱՏՈՒՄ, ՓԱՍՏԱՔԱՆԻՆ
ՈՐ Ազատէ ՆԱ ԱՆՄԵՂԻՆ,
ԶԵՐՄ ԱՊԱՉԱՊԱՆՈՂ ԲԱՐՈՒՍԹՅԱՆԹԻՆ,
ԴԱՏԱՊԱՐՈՂ ԽԵՂՑ Աղքատին:

ԶԵՄ ԲԱՒԱՏՈՒՄ, ՀԱՎԱՄ Մըտքեր
ԳԻշեր—ցորեկ քարոզողին,
ՈՐՍՈՂ ՄԱՏԱՂ ԿԱՆԱՆց ՍԵՐՏԵՐ
Այրւող, տանջւող սիրահարին:

ԶԵՄ ԲԱՒԱՏՈՒՄ ՔՐՆՆԱԴՎԱՏԻՆ,
ՈՐ ԸՆԿԵՐ Է ՄԱԿԼԵՐՆԵՐԻՆ.
ԹԷ ՀՐ ԳՈՎՔ յիմարներին,
ԽԻՍՏ ՎՆԱՍ Է ԻՐ ՉԱԲԵՐԻՆ:

Զեմ իաւատում վանքում ճգնող
Սեւ իազուստով վարդապետին,
Լոյս-ցերեկը հանգիստ առնող,
Գիշեր շըրջող աւազակին:

Զեմ իաւատում ես տէր-տէրին,
Որ նա փըրկէ մարդկանց իոգին.
Մարդիկ որքան երկար ապրին,
Վընաս է իր առեւտուրին . . .

Զեմ իաւատում սուրբ տաճարում
Նորահարսին, նորափեսին,
Որ երդւում են եւ հաղոլդւում . . .
Զըբաժնւին . . . իէնց մեծ պասին:

Հաւատում եմ դեղին ոսկուն ,
Որ ամեն ինչ նա գնում է,
Միայն մահւան վերջին ժամուն
Իր տիրոջը ուրանում է:

Մ. ԱՂԱՅԵԱՆՑ

Երբ որ մեռնիմ, Աստուած սիրէք,
Արձանի տեղ՝ շիրմիս վերայ
Լոկ մի կտոր չոր հաց դըրէք,
Վըէն գը ըած՝ «քաղցից մեռա՛յ . . .» :

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ





ՄԱՍԻՄ

Մ

իրարս տխուր, լի վերքերով,
իմ սեւ օրն եմ ես լալիս.
Մի դեղ չունի՞ս ցաւիս դնեմ,
Խեղճ ու սրգուր, իմ Մասիս:

Անգութ վերքիս խորունկ ցաւից
Մինակ, տխուր ման կուգամ,
Երւած սրտիս լացի ձէնից
Գլուխս առած քեզ կուգամ:

Նա՞տ կան ցաւեր, շա՞տ կան դարդեր,
Իմըս սեւ է, սրգալի.
Զէնս լրսէ մի խօսք ասա,
Երւած սրտիս դեղ լինի:


Սիրտըս սեւ է, հոգիս տըխուր,
Ցաւս էլ մէկը չը լսեց.
Լոկ արցունքն էր ցաւիս դարման,
Էն էլ չորցաւ ու ցամքեց:

Սարեր ձորեր ես միշտ ընկած
Հանգիստ չունիմ զօր-գիշեր,
Եարաբ դու է՛լ, սիրուն Մասիս,
Ինձ չես ուզել քեզ ընկեր:

Խօսք չես ասում, ես ո՞ւր գընամ
Ես սեւաւոր աշխարհում,
Գոնէ փոքիր ինձ մի շիբիմ,
Աընոտ հողիդ սեւ գրկում:

ՊԵՏՐՈՍ ՄՈՃՈՒԵԱՆՅ

ՔԱԶ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ



Եր նախնիքը ազգի համար,
Իւրեանց կեանքը զոհեցին,
Թշնամեաց ու միշտ աներկիւդ,
Սուրբ առած վազեցին:

Նրանց առաջնորդ ազգի սէրն էր,
Նրանց խրախոյսը մեր հաւատն էր,
Սրանով նրանք քաջ անունը,
Իրաւամբ ժառանգեցին:

Նախնեաց փառքին ժառանգաւոր.
Ժառանգէ մեզ քաջ Վարդան,
Մհջ սպարապետ հայրենասէր
Սուրբ հաւատոյ վեհ պաշտպան:

ԱՀԱՐՈՆ ՄԱԾԻՒՅԱՆ

५
Senio.

Op 15

Խոհեմամ Հայրիկի յիշատակին

A handwritten musical score for four voices (Soprano, Alto, Tenor, Bass) and piano. The music is written in four systems, each with a different key signature and time signature. The vocal parts are in soprano, alto, tenor, and bass clef. The piano part is at the bottom, with two staves. The lyrics are written below the vocal parts in Armenian. The score is written in black ink on aged paper.

Կողման այս օճառը թողում մենք պարագանաց եւ մի տանիքը

զատկական փոր է առ թիւն այս կերպութեալ լուսակ դարձ զի բուհ

Արքայութիւն եւ զարութիւն եւ բար իւսպանաց

յատին պատճեն այս ժամանակ

այս ժամանակ



Бебель,

Պ Ե Պ Ե Լ

Դ Ա Խ Ա Ճ Ա Ն Ը Ն Կ Ե Ր Ը

Սա' մեզ բոլորիս մատնեց կրակին
իր ցոփ-գարշելի հանգստեան համար. Ա
Մատնուած ըիրտ կամք իքմահանոյքին,
Կանգնեց նրա մօտ որպէս ֆրկարար,
Սառնասիրտ, մոլար:

Կարծը քարերին երբ մենք կուրծք տւած,
Չոր հացի համար կռիւն ընտրած . . .
Մարտի դաշտ եկանք մերկ, ծարաւ-քաղցած
Նա մեզ դիտում էր, կռւից խոյս տւած,

Իր խօսքը մոռցած:

«Նախատի՞նք կարդա՛, բոնուոր դու իերոս
Անզգայ մարդկանց գարշ արարքներին».
Շեփորը հնչեց ահեղ քո կռուի,
Կոչ կարդաց համայն կեղեքուածներին.

Վե՛հ գաղափարին . . .

Ցաղթական օրը դժուար ձեռք բերւած,
Ազատ դրօշը պարզուեց բարձրից
Հմբոստ ամբոխը ի սպառ ազատւած,
Շուռ տւեց երես կեղծ ընկերներից.

Դաւաճաններից . . .

ՎԱԳԻ-ԹԱԹ

ԵՐԳ ԹԻԿՈԼԵԹԹԻ

Կին փոփոխամիտ է,
Զոյն վստահողը խենթ է.
Շատ անգամ կին մը
Հովին դէմ փետուր մը:

ՎԻԿԴՈՐ-ՇԻՒԿՈ

THE OLYMPIC GAMES


Թէ զնտանի մէջ բանտարկուած, մնամ նօթի ու ծարաւ,
Ըսպեմ ցաւոց լլկումներու սեւ բաժակէն անխնայ,
Եւ ընկճեն զիս վայրագ ձեռքեր յօշոտանքով չարադաւ,
Երդում ունիմ, պիտի պահեմ Հնջոկեան ուխտս աներկըայ:

Թէ սպառազէն թշնամիներ արհաւրանքով յարձակին
Յագեցնելու իրենց տեսչը արիւնախում, ախտաժէտ,
Անշէջ մէջէն բոցերուն իսկ պիտի երգեմ իմ անգին
Հնչակեան սուրբ ուխտ-մեղեդիս, պիտի պահեմ զայն յաւետ:

Մայ ու երկիւղ, բռնութիւններ ոչնչութեան հեւքն ունին
Որմէ՛ երբէք չի սարսափիր ուխտեալ զինւորն՝ Հնչակեան,
Գողգոթայի, կախաղանի բարձունքէն ալ անծկագին
Ուխտիս երգը սոսկ պիտ' ինչէ շրթունքներէսմօտ մահուան:

ԿԻՒԼՊԵՆԿ Գ. ՊԵՏՐՈՍԵԱՆ

Surunli-Qnqka



ՅԱԿՈԲ ԶԱԼԵՔԵԱՆ

(Երաժիշտ-Երգահան աշխատանկից “Դալայլիկ” ի)

ՍԻՐԵ ՀԱՅԸ

Ս

Սիրէ հայը թէ ըլլայ
Աղքատ, տնանկ, անկարող,
Հագուստները հին ու մին,
Դռնէ ի գուռ մուրացող:

Անունն է հայ՝ պարտ է քեզ
Սիրել զնա հայու պէս:

Սիրէ հայը թէ ըլլայ
Հարուստ, փարթամ, մեծատուն,
Ունենայ պէյ, էֆէնտի,
Կամ ամիրա պատուանուն.

Անունն է հայ՝ եւն...

Սիրէ հայը թէ ըլլայ
Հայր-սուրբ, տէրտէր, վարդապէտ,
Վրան փիլոն, ծոցը խաչ,
Կաթողիկոս, հայրապէտ:

Անունն է հայ՝ եւն...

Սիրէ հայը թէ ըլլայ
Բողոքական, այլ կրօն,
Էստ քո կարծեաց սնապաշտ,
Հերետիկոս, անկրօն.

Անունն է հայ՝ եւն...

Գ. ՇՄԱՀՈՆԵԱՆ



ԴԵՊԻ ՃԱԶԱՆՉԵՐ



մէն քայլի նոր նոր պատկեր,
Հետաքրքիր թովիչ աչքեր
Հրապուրում են մեր սիրտն ու գանկ,
Փոթորկելով մեր խաղաղ կեանք
Սլանում ենք մենք քամու պէս
Գրաւելու ցոլք ու ճանան .
Բայց ինչ, սխալ . . . : Արեւի տակ
Չկայ մի իր, որ գրաւելոց
Մի ժամ յետոյ չը կորցնէ
Իր հրապոյըն. կամ մի գիշեր
Լուսացնելով, չզգանք սխալն,
Չզգասաւանանք, չստրջանանք :

ԱՏՐՊԵՏ

(Մարգիս Միւպահեսմեան)

ԿԵԱՆՔԻ ՊԱՐԳԵՒԾ



Մի օր մտայ մեր կեանքի պարտէզ,
Բացւել էր վարդը, անոյշ հոտ բուրեց.
Թէեւ անգութ է փուշը՝ աղեկէզ,
Խղճաց նուռակիս, ինձ մի վարդ տւեց:

Երբոր մօտեցայ ես անմեղ կուսին,
Վիշտս յայտնեցի, նա զթաշարժւեց.
Մեղմ ժպտաց նա ինձ ինչպէս վառ լուսին
Եւ ցաւիս դարման իր սիրտը տւեց:

Մի օր էլ բախտիցս բաժին ուզեցի.
Նա էլ չը մերժեց եւ ուրախ խնդաց —
Անուն եւ պատիւ ես վայելեցի —
Փառքի պատկներ դափնիքից հիւսած:

Բայց երբ հայ եղբայր, ձեռքս ձգեցի
Չարի որոմը պոկել քո սրտից
Եւ այրող խօսքով քողը պատռեցի
Քեզ մոլորեցնող խաւարի որդւոց —

Դու միայն, անգութ, ինձ չը խղճացիր.
Եւ կեանքիս վարդը եւ կուսի սիրտը,
Անունս ու պատիւս դու անարգեցիր
Եւ կեանքի տւածն ինձնից խլեցիր:

ՎԱՐԴԱՆ



մ հայրենեաց իոգի Վարդան,
Հոգիս իոգւոյդ եղնի ղուրպան,
Որ Տըղմուտի ափերի քով,
Վաթսուն հազար կտրիմներով,
Զարկիր, զարկուար, ինկար՝ քաջ քաջ,
Պարսիկք սըփուած ի ծախոդ ու յաջ:

Իմ հայրենեաց արեւ Վարդան,
Հոգիս իոգւոյդ եղնի ղուրպան:

Աւետարան ու խաչն առիր,
Տարիը երկինք բարձրացուցիր.
Եւ դու ալ յետ Թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին չտուիր,
Որ հայրենեաց շողայ արեւ,
Շուարշանայ դաշտին վերեւ:

Իմ հայրենեաց, եւն:

Արինդ կարմիր, կարմիր Թափուաւ,
Դաշտն ու ծաղիկ ներկուեցաւ.
Լուսնակն եկաւ ամպի տակից,
Պաղ պաղ Թափեց ցողիկն յաչից,
Որ հայրենեաց վարդեր բացուին,
Երգէ պլառու դրախտի ստրին:

Իմ հայրենեաց, եւն.:



ՅՈՒԴՈՅԻ ՀԱՄԲՈՅՐԸ

Ծանր

Արծաթսիրութեամբըն մոլեալ Յուդայ
Զիւր զմեծ զվարդապետն
Ընդ Երեսուն արծաթոյ
Հրէիցն մատնէր:

Ընդ որում ես համբուրեցից,
Ասէ, զնա կալարուք,
Ով համբոյը նենգութեան,
Նշան եւ առիթ մահու:

Մերկացաւ յինքենէ
Զաստուածային սուրբ իոգին,
Եւ զգեցաւ զսատանայ
Որպէս հանդերձ արկաւ զիւրեաւ:

ՈՂՋՈՅՆ



ողոյն, ողոյն ճառագայթող ո'վ
արեւ,

Պահ մաւելի փայլէ այսօր մեր վերեւ.

Համայն Հայեր պիտի փութան իեւ ի իեւ,

Շռայլելու իրենց յարգանքն ու բարեւ

Մեր տառապեալ Ազգին

Սիրեցեալ Պատրիարքին:

Սիրեց նա Ազգ, Ֆշմարառութիւն եւ բարիք,

Որով ինքն ալ եղաւ երկրորդ մի Հայրիկ.

Մեծ հրաւեր կայ այսօր «Հայկազունք արիք»

Ողունելու համար ամենքս ալ փարինք

Մեր սիրեցեալ Ազգին

Յաղթական պատրիարքին:

Ազգին սիրոյն ստանձնեց նա վիշտեր իոգ,

Տառապանք ու աքսոր կրեց անքողոք,

Զի նետուելու բռնապետաց գիրկն ու գոգ,

Որով հիմա պատիւ կ'ընէ ամեն ոք

Մեր սիրեցեալ Ազգին

Վեհոգի Պատրիարքին:

Ո'վ իզմիրլեան, իին ցաւերը մի' յիշեր,

Անցաւ Քու եւ Հայուն գլխէն սեւ գիշեր.

Ալ քաղցրացաւ մեր վիճակն որ շատ գէշ էր

Այն օրերն ուր կ'այրունէին սուր փուշեր

Մեր սիրեցեալ Ազգին

Տառապեալ Պատրիարքին:

Կ'աղերսենք քեզ, ո՞վ երկնաւոր Աստուած մեր
Օ՛ն Հայ Ազգին թեւ եւ թիկունք պահպան լեր
Թափէ առատ քո երկնային հոգիդ, սէր,
Որ պսակուին քոլոր իղձերն ու յոյսեր

Մեր սիրեցեալ Ազգին
Ազգասէր Պատրիարքին:

ԿՂԵՄԼՅԱ Մ. ՏԱՏՐԵՎՈՆ



ՊԱՆԴՈՒԽԻՍԻ ԵՐԳԸ



Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Գուշ հայրենիք, քեզ յիշելով կարտասուեմ,
Զկայ ծնող, չկան որդիք. քոյր, եղբայր,
Զիք ամուսին. որով ցաւերս մեղմանայր:

Օտար երկին, արեւ, աստղեր եւ լուսին
Թէեւ պայծառ՝ ինծի խաւար կը թուին.
Բնակարանս ախուր պանդոկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար՝ հաց:

Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն,
Սակայն ունիմ քովս Յիսուս, Փրկէ զիս,
Նա օտար չէ, նա իմս է, սիրէ զիս:

Ա.ՄԱՐԴԱՆ

Allegretto.

Op. 15

Ա. ՄԱՐԴԱՆ
Op. 15
15. Ա. ՄԱՐԴԱՆ

Ալլեգրո.

Առաջ ա - նի - րաւ ե - ին եւ ոչ աշ ան - միտ
Անոնք որ ըզ ձե զ կը պաշտէ - ին ան - ըրա - միր
Ձե . զի - սը ման վեր - բե - րու - մո - վ թը - մա - րիտ
Ու - ղեր - ձե - լով ի - բենցա - ղեր - առն - ու թե - մեր

ԱՆՏԱՌԻՆ ՄԷԶ

Պ'յ անիրաւ էին եւ ո՞չ առ անմիտ
Անոնք որ զծեզ կը պաշտէին անիրաւէր,
Ձեզի նըման' վերբերումով ճըշմարիտ
Ուղերձելով իրենց տղերսն ու թեւեր:



Ա. ՄՄՐԼԵՇԱՆ

(Ծանօթ Երգահան, Երաժիշտ, Զուրակահար, որ
անձնուիրաբար աշխատակցեցաւ. «Դայլայլիկ» ին
կարգ սր ընտիր եղանակներով:)

Թէ եղեւին ըւլայիք դուք կամ նո՞տի,
Զեր շուքին տակ ըզգայնացած անսովոր՝
Կը իմայէր մարդ Թէ խորիուրդ մը կ'աճի
Թուխ կանանչի փթթումին մէջ դարաւոր:
Տերեւաշարժ Թէ լըլա իք դու կաղնին,
Կամ անտառը սոսինելուն ան զառամ,
Մէջ ձեր անուշ սոսաւիւնի ու ձայնին
Քուրմը կը լնար կարդալ դաքիր մը պատգամ:

Թէ ըլլայիք հովանաւոր դրախտն Հացեաց
Լուռ պուրակին' աղբերակին ջինջ ու զով,
Երկըրպագուն ձեր մօտ կուգար անձկայրեաց'
Թոյր մը երգի' բոյր մը խունկի երազով:

Թէ ըլլայիք դուք բարձրաբերձ բարտիներ'
Արձանացած պաշտումներու սլացք անքուն ,
Արեւորդին ձեր կողին մէջ կը դիտէր
Խաչ մը խոկում մահուան ձորին վրան կանգուն:

Թէ ըլլայիք նոյն իսկ ցածուն մորենին'
Խոր տեսիլքի' մը կրակներովն իըրդեհուած ,
Զեր թաւուտքին մօտ' ուր բոցեր կ'արիւնին'
Պիտի զիրար տեսնէին մարդն ու Աստուած . . :

Ո'չ անիրաւ էին եւ ո'չ ամբարիշտ
Անոնք որ զձեզ կը պաշտէին, ո'վ ծառեր ,
Ու նուագելու համար իրենց տենչն ու վիշտ'
Ո'քան երբեմն հոգիք ձեր շուրջն են թառեր,

Հիմա սակայն լըքուած էք' լե՛րկ ու անշուք,
Ցաւի քուրջեր կապուած են ձեր կանանչին,
Ու դրիադներ խուսած' ձեր մէջն անշըշուկ
Ա՛լ չեն մըափեր իրենց անուրջքն առաջին . . . :

Իսկ ես Թէ ձեր քուրմն ըլլայի օր մ'եւեթ'
«Ոսկի ոստ»ով կը դընէի ձեզ պատուաստ,
Որ ձեր այն նոր բողբոջումի գիրկն անհետ
Տերե՛ւ մ'իսկ կեանքն ըլլար պաշտում եւ իմաստ:

ԵՂԻՇԵ ԵԳԻԱԿ. ԴՈՒՐԵԱՆ



ԳԱՐԱՆԱՅԻՆ ՍԱՐՍՈՒՌՆԵՐ



կա'ր դարձեալ բիւր նազանքով
գարուն գողտրիկ, գեղազըւարճ
եւ բնութիւն մայրագորով
Վերածնաւ խինդով կանաչ:

Մաղիկները ծիծղուն, ծիծղուն
Վերսկսան ապրիլ յուշիկ
Թոյրի, բոյրի կեանքը անհուն,
Թովչութեամբ մը անուշ, միստիկ :

Լճակը լուռ, լուսափաղփուն
Սոխակին հետ սիրալեզու
Կը գեղերփնեն գոյնով ժպտուն
Միրկաթինը անուրջներու:

Դաշտ ու ծործոր լոխն, մռայլ,
Նոր կեանք, նոր յոյս, ծիծաղ ծաւի,
Մաղկին, ծըլին ծիրանեփայլ
Սարսուռներով թոյրի, բոյրի:

Ու ես կըկին, ա'հ, առանձին,
Կըկին նժդեհ եմ մնացեր,
Եմ իին ցաւին, դառն արցունքին .
Հառաչներուն հետ տարուբեր:



ՍԻՐԱԿԱՆԻ ԳԱՆԳԱՏԸ



Օսքեղ սիրի , որ դու ինձի չը թարկես ,
Եթէ թարկես' հոգով մարմ նովդ խար-
կես ,
Անիծեմ , տաս տարի տեղումդ պարկես ,
Եօրդանի մէջ տնքայ կողերդ . աղջիկ :

Ում հետ էլ որ երթաս' հետդ չվարւի ,
Պսակւելուդ օրը՝ քողքըդ սեւ կարւի .
Նօրդ տուն ու դուռը սեւ քարով շարւի ,
Ախ ու վախով մնայ ախալէրդ , աղջիկ :

Մօրդ լեզուն ուռի , քերանը փակւի ,
Քառասուն օր տանջւի' հոգին չը քակւի ,
Էնձնէն ղայրի հետդ ով որ պսակւի ,
Երեք օր չը վելէ սէրդ , այ աղջիկ :

Չգտնես խամ կտաւ էնես արխալուղ,
Էն քոլ աշխարհիքի մէջ օրդ անցնի սուղ,
Հացդ կորեկ էղնի, գարին իետը կուղ ,
Օձի պէս սակաւի քո կերդ, աղջ ի'կ:

Ես մի խեղճ տղայ եմ, էրի քեզ գիւման,
Աստուածածինն էնէ քու մօրդ դիւան,
Իր կենաց մէջը նա' չունենայ սաղ ջան ,
Որ ինձ էրաւ տնից դարբէդաը աղջի'կ

Պատճառն ի՞նչ էր, որ չ'հաւնաք դուք ընծի,
Կարօ՞տ էք Դովլաթի, փափա՞գ էք գանձի ,
Առաջ խօսք տւողի լեզուն պապանձի ,
Տանողդ չտեսնի քու խէրդ, աղջի'կ-

Ալագեօզ աչքերդ, կամար ունքերդ,
Ուզում եմ հեռանամ' չի թողնում սէրդ,
Քեզի ընձնէն էրաւ քու քեաֆիր մէրդ,
Թնդրում եմ շատանայ վէրքերդ, աղջի'կ:

Ես Զուլաւօղլին եմ, դարդովդ եմ կեցի,
Գիշերն եմ մտածի, ցերեկն եմ լացի,
Տասը տարի խաթրիդ ազալ մ'նացի,
Ծակծ կիշծոցիդ մէջ ծծերդ աղջի'կ:



Solo.

ԴԱՇՆԱԿՑԱՆՆԵՐԻ ՄԱՌԵ



այ երիտասարդներ, շուտ շտապեցէք
Բոպէն շատ թանգ է, առաջ բալեցէք,
Օտարք Հայերին կասեն վախսկոտ են,
Քաջութեան դրօշակը պարզեցէք :

Միթէ մենք Վարդանի ցեղից չե՞նք,
Մէկս հազարի դէմ կը կռւենք,
Մի ժամանակ մենք շղթայուած էինք,
Հիմա ազատ ենք եւ ունինք շատ զէնք:

Օգնութեան հասան քաջ Խան ու Մուրադ,
Ճիշդ Հայու զաւակ, ծնունդ անարատ,
Մոկացի Գրիգոր եւ երկու Արշակ
Գնդակ թափում են կարկուտից արագ:



ՏԱՐՈՆԻ ԱՌԻՒԾԸ ԵՒ ԻՐ ԶԱԳՈՒԿՆԵՐԸ

Քաջ Թումանեանցը. որտորդ Գէորգը
Կազմել պատրաստել են իրանց խմբերը
Դաշնակցութեան դրօշակի ահից
Սարսահայար փախում էին քրդերը :

Յօրինեց

Եղանակեց

ԱԱՀԱԿ Ա. ԽԱՆՃԵԱՆ

ԱՐԻՍՏՈԿԷՍ. ՔՀՆՅ. ՀԻՍԱՐԼԵԱՆ

Չափաւոր

Ի ՎԵՐԸՆՏՐՈՒԹԻՒՆ

S. ՄԱՏԹԵՈՍ Ս. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ



իա' գարուն գեղածիծաղ փրկութեան,
Նորափետուր կուգայ սփռել մեր վրան
Բիւր բարիքներ, ո' շայ եղբարք համօրէն ,

Ոյց կ'ըլծայինք մեր սրտերուն խորերէն:

Ցնծամբ իոգւով կաթոգին ,
Փառք վերերգեմբ մեք յերկին :

Հայր մունէինք գորովալիր՝ բարեգութ,
Խլուած մեզմէ ձնոքերով վաս' ժանտաժուտ.
Հայր հոգեւոր անձնադիր իւր Հայ հօտին,
Ահա' փառքով դարձաւ իւր պերճ գահ կրկին:
Ցնծամք եւլն:

Օրէնք, սահման, սէր, միութիւն, ազատ կեանք
Բերաւ նա մեզ զերթ փունջ ծաղկանց երփներանգ.
Մեր Վեհափառ Տէր Մատթէոս Սրբազն,
Կեցցէ՛ յաւերժ, կեցցէ՛ փառօք անսասան:
Ցնծամք եւլն :

Եկէ՛ք ուրեմն, Եղբարք, մեր Հօր գահուն շուրջ
Բոլորուելով ուխտենք սրտով՝ սիրով լուրջ,
Զանալ, գործել յօգուտ Ազգին, Հայրենեաց,
Փայլիլ ուսմամք, յառաջ դիմել քաջընթաց:

Ցնծամք եւլն:

Ո՛վ հայր մեր, հայր ծընելասէր վեհոգի,
Վիշտ, ցաւ, կնճիռ, հոգ տրամութեան ա՛լ հեռի.
Աշդ հայրական մեզ հովանի՛ պահապան,
Օրինէ՛ յաւէտ քու որդիներդ համերամ:

Որք կը գոչեն, յաւիտեան
Սպահի՛ Հայր մեր իզմիրլեան :



Դաշտանից

Ա. ՄԱՐԼԵՆԻՆ

Lento

Handwritten musical score for piano, Lento. The score consists of five staves of music. The first staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The second staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The third staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The fourth staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The fifth staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The music includes various note heads, stems, and rests, with some notes having vertical stems and others horizontal stems. There are also several rests of different lengths.

Handwritten musical score for piano, continuation. The score consists of five staves of music. The first staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The second staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The third staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The fourth staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The fifth staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The music includes various note heads, stems, and rests, with some notes having vertical stems and others horizontal stems. There are also several rests of different lengths.

Handwritten musical score for piano, continuation. The score consists of five staves of music. The first staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The second staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The third staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The fourth staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The fifth staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The music includes various note heads, stems, and rests, with some notes having vertical stems and others horizontal stems. There are also several rests of different lengths.

Handwritten musical score for piano, continuation. The score consists of five staves of music. The first staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The second staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The third staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The fourth staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The fifth staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The music includes various note heads, stems, and rests, with some notes having vertical stems and others horizontal stems. There are also several rests of different lengths.

Handwritten musical score for piano, continuation. The score consists of five staves of music. The first staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The second staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The third staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The fourth staff has a bass clef, common time, and a key signature of one sharp. The fifth staff has a treble clef, common time, and a key signature of one sharp. The music includes various note heads, stems, and rests, with some notes having vertical stems and others horizontal stems. There are also several rests of different lengths.

ՍՈՒԳ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ



մ սիրելի զաւակունքը,
կը թափառին օտար աշխարհ.
Ես ո՞ւր դիմեմ, ո՞ւր փնտըռեմ,
կը ծառայեն այլոց խոնարհ,

եկայք որդեակը իմ
Զեր մօրն այցելութեան:

Դարեր անցան լուր մը չառի
իմ քաջերս մեռան կորան,
կուլամ արիւնս կը սառի . . .
Մէկը չունիմ տայ ինձ դարման:
Եկայք որդեակը իմ, եւն:

Արիւնս ցամքած, սիրտը մաշած,
Դէմքս է տըխուր մինչ յաւիտեան.
Եւ կարօտով իմ որդեկաց,
Պիտի իջնեմ սեւ գերեզման:
Եկայք որդեակը իմ, եւն:

Եւ դու հովիւ թափառական,
Կ'երգես տխուր ի մէջ հովտաց.
Եկ, արտասուենք թանկ կորըստեան . . .
Տըխուր մահուան մեր որդեկաց:
Եկայք, որդեակը իմ, եւն:

Իսկ դո՛ւ կըռունկ իմ Հայրենեաց . . .
Գնա՛ հեռո՛ւ աչքես ի բաց . . .
Յետին ողջոյնս տար զաւակացս,
Զի կեանքիս մէջ յոյսս է մեռած:
Եկայք որդեակը իմ, եւն:



Մ. Ահետիսեսն

ՆԵՐԴՆՉՈՂ ՈԳԻՆ



բիաւիրքներու մռայլ օրերուն,
Կենաց եւ մահու վերջի ըոպէին,
Դո՛ւ մեզ շունչ տուիր եւ յոյս շողշողուն
Դո՛ւ գիտակցութեան ոգի պանծալի:

Միշտ մեզ իետ եղար մինչեւ վերջին կէտ.

Մեզ պաշտպան դաւճար, մեր բախտ վճռեցիր,

Հուրի ու սուրի մէջէն ակընդէտ.

Առաջնորդ եղար, մեզ ճամբայ բացիր:

Եւ մենք ուխտեցինք քեզի հետեւիլ.

Ուր որ ալ լինիս, ինչ որ ալ լինի .

Մեր յոյս միշտ դու ես, ոգի մշտածիլ
Եղիր՝ հիմայ ալ մեր պաշտպան արի:

Այս կը հասնի մի այլ սեւ վայրկեան.

Բոպէ ահաւոր, ծնունդ մեծ երկանց,

Դարձեալ վիշտ ու ցաւ, կոփ' և, տառապանք,

Ու նորէն արիւն, ձայն հեծեծանաց:

Եւ մենք թողուած ենք դարձեալ միայնակ,

Սյս անտէր երկրի խուլ անկիւնի մէջ

Մեր սար տարտերու ծանր քեռան տակ,

Հասի՛ր, մե՛զ հասիր, սուրբ ոգի անշէչ:

Երկրիս մութ, խաւա՛ր, մեծ ոյժերուն դէմ,

Մեզ ասպար եղի՛ր, ոգի՛ աննկուն.

Աշխարհիս բոլոր տարերքներուն դէմ,

Եղիր մի՛ անյայտ, աննուան զօրութիւն:

Եղիր անսպառ աղբիւր յորդահոս.

Մարեցու՛ր մեր մէջ ատելութեան հուր.

Եղի՛ր մեզ համար քնար քաղցրախօս,

Նուազէ՛ միութեան երգը հեշտալուր:

Եղի՛ր ժպիտի քաջ սերմանացան .

Քար սըտե՛ր հերկէ, ցանէ գութ եւ սէր.

Եղի՛ր դու պատճառ տգէտ մարդկութեան ,

Եղբայր դառնալուն բոլորանուէր:

Խսկ երբ արիւնից ձայն կուտայ աշխարհ.

Եւ մեզ կը վիճակուի դարձեալ զոհարան,

— Ո՞յ, արեան Աստուած ծարաւ է միշտ աւ —

Եղի՛ր մեր վրէժի ոգին անսասան :

Introduction

ՏԵՐԵՎԱՆԻ ՕՐ

all Adagio

Դու - ստու - պարող Դ այ ն Շե - րաց հա . մար ճա - կատը թա - գեզ շիրա
բա - րու - թը ա - ծոց այ ն սու - րը ըստանդ մը - նաց մի - այ ...ն
ե - ղուկ . յիմ սիրո իջնկ - եալ թա - փուր ժամ ե իմ սիրո .

ԿՈՅՄ ՊԱՊՈՒԿԸ



ըտինքս սըբոլ միայն իերաց
Համար ճակատը թափեց քիրտ.
Բուրումն անոյշ այն սուրբ քրտանց
Մընաց միայն, եղուկ, յիմ սիրտ.
Խնկեալ թափուր ժամ մ'է իմ սիրտ . . .

Խօսքերս Երգող միայն շրթանց
Համար շրթունքս ունեցան Երգ .
Արձագանգը միայն մընաց
Երգոցն յիմ սիրտ իբրեւ ողբերգ .
Նըւագահոս սիրտս է խոր վէրք :

Արտասուբներս ծըծող շրթանց
Տըւին միայն շրթանցս համբոյր .
Պատկերն աչաց սեւ լոկ մընաց,
Եղուկ, սակայն չը գիտեմ ո՞ւր.
Արտասուբէ աչքս եղան կոյր . . .

ԵՂԻԱ. ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆ

ԿԱՆՉՐԵՒԷ

Օդը ցուրտ է ու կ'անձրեւէ անդադար,
Ծովն ալ ուժգին կը մոնչէ խօլաբար,
Որքատունկը կը մազլցի պատն ի վեր
Կատղած հովկն կիյնան դեղնած տերեւներ:

Կեանիս ցուրտ է ու կ'անձրեւէ անդադար
Ծովն ալ ուժգին կը մոնչէ խօլաբար,
Եւ խորհուրդներս կը մազլցին անցեալին,
Բայց, ո՞հ, յոյսեւն մատղաւ սրտիս կը մեռնին:

Կեանիս ցուրտ է ու կ'անձրեւէ անդադար...

Sarunian-Torikyan

Կ. ՄԵՇԱՐԵՆՅ

ရန်ပြို. ၂၆. ဂျောက်နှင့်ပြည့်

ԶՄԵՐՆԱՆՑԱԿ



մեռն անցաւ, եկաւ գարուն,
Հալաւ բանձրիկ սարերու ձուն.
Ճամբայ բացուաւ ղարիքներուն:
Իմ ղարիքէն խաբար չը կայ,
Սիրտս ճամբին դադար չը կայ:


Ղարիբ երկիր ամպ-մշուշ է,
իմ ղարիբի սիրտ քնքուշ է,
Ռուկը վոխէ՝ քար ու փուշ է:

Ների'ք մնաս, դարձիք վաթան,
իմ ախալէ'ք ջան, դարիք եա'ք ջան:

Զուրն է պըծեր, կուգայ սարէն,
Սարէն, ձորէն, իմ աչքերէն . . .
Երար մի՛ տար սրտիս եարէն.

Դարձի՞ր վաթան, իուն անուշ է,
Հոսն անուշ է, ջուրն անուշ է . . .

Ա.Դ. ԾԱՏՈՒՐԵԱՆ



Ե. ԳՈԼԱՆՃԵԱՆ

Երան կատար. խաչի մը պէս կարկառուն,
Բազկատարած, մահուան պէս լուրջ անայլայ,
Պուտտա կ'ըմպէր նիրվանային կաթը մռայլ
Միշտ անտարբեր սահող անթիւ օրերուն:

Բաղեղները ձեռքերուն շուրջ գալարուն
Եկան դրոշմել հոն իրենց խանդն ու թուխս փայլ
Ծիծեռնակներ Եկան հիւսել, հոն ծալ ծալ'
Իրենց բոյներ... Եւ Պուտտա լուռ էր, միշտ նոյն:

Եկաւ աշունն, ամայացած այն բոյներ ։ ։ ։
Զերթ փոս աչեր, կը նայէին Պուտտային .
Հովն, անցնելով անոնց մէջէն. կը սուլէր . . . :

Երկու արցունք այս ատեն բուռ կը սահին
Նիրվանայով յափրացած իր աչերէն.
Եւ Պուտտա վա՛ր կիջնէ, դէպի կեանք նորէն:
ԵԴՈՒԽՐԴ ԳՈԼԱՆՃԵԱՆ

ԳԱՐՆԱՆ ԱՂՕԹՔԸ

«Կոհակ» ին



ուն կը փթթեցնես որու որ իպիս
թէ՛ պուրակներուն թէ՛ իին որմերուն
կուտաս զօրութիւն,

Անուշ ժպիտը բոլոր շրթներուն
Ու կեանքը սրտին:

Գայուը մարգերուն դուն որ կը փոխես
Ոսկի սերմերու, ազնիւ քարերու,
Առատ հունձքերու,

Ու մինչեւ սեմին մակելոններուն
Շողեր կը դնես:

Ոի գարունն երբոր սիրէ ամէն քան
Կը գեղեցկանայ նոյն իսկ գերեզման.

Ու խոտը դրսէն
Կը ծնցնէ նոր փթթում մ'երկնային
Մեռելոց սրտին:

Թող չըլլան անոնք աշխարհի մինակ
Եւ որպէս թէ դուն կը մ'սաս անքեղուն
Սիրոյ եղանակ,

Այլ բուսցուր իրենց գորշ մոծիրներուն
Մէջ յոյսը աղուոր երկնային լոյսին
Ու վերադարձին...

Սիհլի ԲԲԻՒՑՈՄ



Ֆ. ԼԱՍՈՎԱՆ



ուսահատւել մեղք է ընկե՛ր ,
Արիացի՛ր, ոգի առ,—
Նայի՛ր, Փայլեց հեռւում լապտեր,
Մենք էլ կառնենք շուտ դադար:
Արիացի՛ր, սիրտ առ, ընկե՛ր ,
Շարունակենք մեր ուղին ,
Լսի՛ր, կարծեմ թէ զանգակներ ,
Ղօղանջեցին սարերէն . . .

Ահա՝ բաշւեց աղօթարան,
Վստա՛ի ընկեր, առաջ քայլենք,
Զինւոր ենք մենք ազատութեան,
Եւ անփորձնեղ կը իասնենք. . .

Introduction

Andante

Ա. ՄԱՐԴԱՆԻ օր. 20

0 - տար ա - մա - յի նամ - բե - քի վե - րայ
իմ կա - րա - վա - նը մնալ իլ շո - ղան - չե կանգնիր կա - րա - վա - նը
ին - պի կ - ը թը - ւայ ինէ ևայ - րն - նի քես ինձ մարդ կը կանչէ:

ԵՐԳԵՐ ՈՒ ՎԵՐՔԵՐ

Օտար, ամայի ճամբեքի վըրայ
իմ կարաւանս մեղմ կը դօղանչէ.
Կանգնիր, կարաւանս, ինծի կը թւայ,
Թէ Հայրենիքէս լնձ մարդ կը կանչէ:

Բայց լուռ է շուրջըս ու շըշուկ չը կայ
Արեւա՛ն, անդո՛րը այս անապատում,

Աւս, հայրենիքըս ինձ խորթ է իհմա,
Ու քնքուշ սէրըս ուրիշի գրկում:

Գընա՛, քարաւանս, ինձ իետըդ քա՛շ տար
Օտա՛ր, ամայի ճամբէքի վըրայ .
Ուրտեղ կը յոգնիս, գլուխըս դիր վար—
Ժէռ—քարերի մէջ, փըշերի վըրայ . . . :

Ա. ԻՍԱՀՈԿԵԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՐՁԱԿԻՆ ՇՈՒՇ



զատութեան շուրջն արձանին,
Ցուրտ շիրիմ ներ իրենց դարձեալ,
Մերկութիւնը կողքան լրոին,
Սառ խոհանքով կը մախացեալ . . .

Նահատակներ կուլան նորէն,
Կ'երգեն իրենց վիշտն ու հառաչ,
Անյոյս շունչով մը դառնօրէն . . .
Քանզի անոնք չունին մի խաչ,

Մի մահարձան' իրենց կեանքին
Տառապանացն, այո՛, գոնէ,
Ցոյց տալու, ո՞հ, նըշոյլն անգին'
Զի հանոյքնին արդէն իո՞ն է . . . :

ԱՐԱՄ Յ. ԳՈԶԱՆՃԵԱՆ

ՄԱՐԶՈՒՄՆ

Adagio

Ա. ՄԱՐԼԵԱՆ

Op. 29

Op. 21

The image shows a handwritten musical score for Op. 21, consisting of five staves of music. The top staff is in G major, indicated by a treble clef and a key signature of one sharp. The second staff is in C major, indicated by a bass clef and a key signature of zero sharps or flats. The third staff is in C major, indicated by a treble clef and a key signature of zero sharps or flats. The fourth staff is in C major, indicated by a bass clef and a key signature of zero sharps or flats. The fifth staff is in C major, indicated by a treble clef and a key signature of zero sharps or flats. The lyrics are written in Armenian, appearing below the vocal parts. The music includes various note values such as eighth and sixteenth notes, and rests. The score is written on aged paper.

ՔՈ' ՏԵՂԻՌ

Քո'յը, մօտեցի՛ր կըրակին,
Մըխէ՛ տերեւն այս բուրեան,
Զի ամէն բան ինձ կըկին
Կը դարձնէ հոտն արեան:

Քո'յը, մօտեցի՛ր դարակին
Ու բե՛ր հեղուկն իընծանեան,
Զի ամէն բան ինձ կըկին
Կը դարձընէ համն արեան:

Քո'յը, մօտեցի՛ր ճըրագին,
Մարէ՛ զայն, թո՛ղ լուսինկան,
Զի ամէն բան ինձ կըկին
Կը դարձընէ գոյնն արեան:

Քո'յը, մօտեցի՛ր նըւագին,
Երգէ՛ դաշտերն ու ցորեան,
Զի ամէն բան ինձ կըկին
Կը դարձընէ ձայնն արեան:

Քոյը, մօտեցուք իմ ձեռքին
Աստուածաբոցն իըրացան,
Զի ամէն բան ինձ կըկին
Կը յիշեցնէ վրէ՛ժն արեան . . . :

Գոյք ան օդագ.

Տալ-սո - րի - կի զա-սակ եմ քաջ շեմ խո-նար-հիր վաստին ա-ռաջ. Սա-րի

զա - սակ քա-րի որ - դի հին քաջ հա-յոց եմ մը-նա-զորդ : Սա-րի զորդ :

Տալ-սո - րի - կի զա-սակ եմ քաջ շեմ խո-նար-հիր վաստին ա-ռաջ

Քա - րուտ լե-ռանց եմ ա-զատ լազ շեմ. ան - սեր ոչ ա-րօր ոչ

Տահ. հայ-աշ բըր - տիք վայ-աշ բըր - տիք, Տալ-սո - րի - կի զա-սակ եմ

քաջ սա-ր տու-թեան սիրոյն հա - մար ե - կի շեմ ինձ յառաջ յառաջ :

ՎԵՐ ԶԱԲԱՆ

Ապօրօք ծանուցուածին համաձայն, ահա այսօր հրապարակ կը հանենի ԳԱՅԼԱՅԼԻՆԻ-ի Ա. բիւր, որ կրնայ շարունակութիւնն համարուիլ մեր նօխորդ Եղագակին:

Ընթեցողին կը բողնինի զատել թէ ֆորձառական որպիսի տառելութիւններ կը ներկայացնէ այս իր նախորդին բաղդատամբ. Անոն զուտ ջան չինայեցին, ըստ կարեւոյն, ամփերի գեղարդուածական զործ մը տալու համար մեր բաժանուղիներուն եւ հասարակութեան:

Միեւնոյն ծրագրով ու նոյն ծառալով կը ձեռնարկենի. իսկոյն, ԳԱՅԼԱՅԼԻՆԻ-ի Թ. բիւրին հրապարակութեան, որպէսզի նիս Սևանիմբեր 30 ին հրապարակ ելին, ըստ մեր ծանուցման:

Օւսի կը խնդրենի մեր պատուածան աօխատակիցներէն ու հասարակութենին, որ ԳԱՅԼԱՅԼԻՆԻ-ի Թ. բիւրին համար դրկուելիք եւզեր, եղանակները եւ նկարները օր տռաջ հասցնեն մեզ: Օւսացած նիւրերը պիտի մնան ԳԱՅԼԱՅԼԻՆԻ-ի Գ. բիւրին, ինչպէս որ այս բիւրին չհասածները վերապահեցին Թ. բիւրին:

Այս առքի կը փակենի ԳԱՅԼԱՅԼԻՆԻ-ի տռաջին տարուան (2 բիւ) բաժանուղագրութիւնը: Սյստմեական փափազողները կրնան բաժանուղագրուիլ միայն Թ. բիւրին, ուղարկելով 6 դր. բաժնեզինը: Բայ ներկայ բիւր ոչ-տարեկան բաժանուղիներու համար 8 դրու է:

Բաժանուղիները փուտայի ծախս չեն վճարեւ:

Տար բաժնեզին միանուազ դրկողին մէկ օրինակ ԳԱՅԼԱՅԼԻՆԻ նույն կը դրկենի:


Մեր օնորհակալութիւնները բոլոր անոնց, որոնք բիւ բիկոնի հանդիսացան մեզ այս դժուարին աօխատութիւնն ի զրոյն հանելու համար:

ԵՐԳԵՐՈՒ ՑԱՆԿԸ

Նօրա ունեցող երգերուն սոցեւ փակտոգծի մէջ
(Զայն.) նշանակած են:

	Էջ	Էջ
Ազատութեան շուրջն արձանին	153	28
Ալագեազ բարձր (Զայն.)	19	59
Ալիտունջ հոգւոյս	70	39
Աշխ թէ գարուն ես ըլլայի	95	42
Ահա գարուն (Զայն.)	140	84
Ահա ծագեց արեւելքէն	14	136
Ահա սուրիանդակի սալլակը	55	65
Ամեն քայլի	1:5	94
Անէ՛ծք քեզ (Զայն.)	53	122
Անի քաղաք	50	108
Արազն եկաւ.	46	12
Արե՛ւ, արե՛ւ, դո՛ւրս ելիք	24	Թուի՛ր իմ նժոյգ
Արծաթսիրութեամք մոլեալ (Զայն.)	129	26
Արիաւիրքներու մուայլ	144	97
Արշաւեն քաջք	71	127
Բա՛մք, որոտան	86	142
Բարի գեղեցիկ	13	73
Գացէք ուսէք	105	37
Գիշեր ու ցորեկ	104	149
Դլդլալով ջուր է իջնում	63	105
Դալլայլիկը	3	57
Դարձեալ փայլեց (Զայն.)	113	10
Դու անցար	64	60
Դուն խելօք հաշուռվ	60	90
Դուն կը փթթեցնես	150	54
Դու չես իաւատում	23	81
Եարալու սրտիս	52	43
Եկար դարձեալ	135	121
Երբոր բացուին	38	73
Երբոր լինի	107	138
Երբոր հողից մարդ դարձալ	82	21
Երբոր մենք մեծնանք (Զայն.)	98	118
Երբոր մեռնիմ	115	74
Երեք չորս հատ	27	104
Երկարիք գիշեր	11	Հերիք է, մայրիկ

ՀԵՇ երկինքն ալ	99	Ուրախ երգեր (Զայն.)	45
Հմայեցիր	49	Չեմ հաւատում	114
Հնչի՛ր դու, ինչի՛ր (Զայն.)	40	Պաղ աղբիւրի մօտիկ	47
Հօյ նազանըմ (Զայն.)	89	Պօլրդ բարձր	72
Հովերն առան (Զայն.)	29	Սարերի հովին մեռնիմ (Զայն.)	36
Հրճուէ՛, ԿՈՀԱՌԻ (Զայն.)	68	Սարէն կուգայ ծիառը (Զայն.)	56
Հիւներն իատ իատ	76	Սիրէ Հայր	124
Զմեռնանցաւ (Զայն.)	148	Սիրուն մանուշակ (Զայն.)	62
Դարիպ աղբեր	32	Սիրոս դաւձել է	22
Մեր հայրենիք	33	Սիրոս տիտոր (Զայն.)	116
Մեր նախնիքը	117	Վերջարան	157
Մեր պապերը	101	Վերջալյուր (Զայն.)	45
Միութեան սուրբ Կրօշակը (Զայն.)	93	Տրոտմ եմ (Զայն.)	25
Մի օր մտայ	126	Տէր կեցո՛ (Զայն.)	9
Յառաջ, լնկերնե՛ր (Զայն.)	78	Գնարսագինին մէջ (Զայն.)	156
Յուսահատուել մեղք է	151	Գնիր իմ պալիկ	91
Նա մեզ բոլորիս	120	Քո՛յր, մօտեցիր (Զայն.)	154
Նոր ըէժիմին	17	Քրտինքս սրբող (Զայն.)	146
Ոլոր մոլոր կուրն է գալիս	30	Օդը ցուրտ է	147
Ո՞հ ի՞նչ անուշ	58	Օտար ամայի (Զայն.)	152
Ո՞ղջո՞յն	130	Օտար երկիր	13 ¹
Ոչ անիրաւ էին (Զայն.)	132		



Վ Ր Ի Պ Ա Կ

—*—*—*

Գիրքը կարդալէ առաջ անհրաժեշտ է սրբագրել հետևյալ գլխաւոր տպագրական սխալները՝ վերնագրերը չհաւելով իբրեւ տող :

Էջ	Տող	Սխալ	Ռեդիդ
33	13	Երեք գնով	Երեք գոյնով
34	14	Թշնամոն	Թշնամին
34	23	Զէնքը	Զէնքը
35	21	Ուր եղիշէ	Ուր եղիշէ
52	12	Թոննեմ	Թողնեմ
54	1	Գոկ եթէ	Իոկ եթէ
58	2	Փեշս	Փջես
71	9	Քաջանց	Քաջացն
82	18	Հարայ	Հարցայ
104	12	Կուել	Կուել
120	3	Կամք իքմահանոյքին	Կամքի քմահանոյքին (Նօթան շրջել)
122			
127	20	Ստրին	Սարին
133	5	Դու	Դուք
34	6	Մեռնի	Մեռնէ
35	14	Բուպիս	Բուլեան
36	6	Կգայ	Կուգայ
38	3	Մեր	Մերս
38	23	Ննջել	Ննջել
44	8	Մերից իյնան	Մերծեցին այն
47	8	Գարուն	Գառան
53	6	Անդունդին	Անդունդը
54	10	Ծթփանքներ	Ծրփանքներ
59	14	Ցոշոտող	Ցօշոտող
60	11	Եմ	Ենք
66	4	Կապեմ	Կախեմ
83	18	Հայրենաց	Հայրենեաց

ՀԱԿԱՐԱԵՐԻ ՅԱՆԿԱ

1. Ա. Շահումյան	59	12
2. Հերման Արշակոն	59	16
3 Հայութի (Ակար Արծոն Քերպարքիս)	59	20
4. Ռ. Ազարյան	59	27
5. Միգում (Հայրիս) Հակոբյան	59	32
6. Բորովյան Գրիգոր	59	40
7. Կառլիկի Բաբեր	59	43
8. Դավթյան Անդրեաս	59	48
9. Քեոսեան Լերմանը	59	52
10. Եղիշյան Տրիոնիքի	59	59
11. Պրիւսաչին Միխայիլիս	59	64
12. Դավիթյան Հանուսի Ժան.	59	69
13. Վարդապետյան Անդրեաս	59	72
14. Մորոնկայեան Ա.	59	76
15. Վանիկոնիկ	59	80
16. Վիկտորյան Էլիսիս	59	85
17. Վեհրուկյան Ա.	59	91
18. Արոնյան Վաչորի	59	96
19. Զաքարյան Ա.	59	97
20. Ա. Բրունեան	59	99
21. Չերքեզյան Հայրի Պյուս	59	103
22. Հայուցյան Ալեքսանդրին	59	109
23. Վարդակյան	59	112
24. Դերիկ	59	120
25. Չելբանյան Հայենը	59	123
26. Կորուտօն	59	125
27. Յուշյան Խաչատրո	59	128
28. Շարլեն Ա.	59	133
29. Անդրոնիկ Անդրոնիկ	59	139
30. Շահենազարյան Ա.	59	144
31. Գրիգորյան Եղիորդ	59	149
32. Համամյան Տ.	59	151

2/2.1987

ԿՈՂԱԿ

Գրական, Քաղաքական, Տնտեսական և

Հնէկային, Գեղարվեստական և

Պատկերագույն Շարարարեց

(Գ. Տարի - 1912)

Խոյս կը առաջ ամեն Զորեքարթի, քառածալ
12 էջ, բնախր թղթի վրայ, ճոխ եւ պէսպիսուն բռ
գոնզաւա թեամբ:

ԿՈՂԱԿ առաջնորդ է աշխարհի բոլոր կողմերը ուր
Հայութիւն կը չնչի:

ԿՈՂԱԿ իր առաջ ելու թիւններով մէկտեղ շատ ալ մաս-
չելի է ժողովուրդի բոլոր խաւերուն

ԿՈՂԱԿի բաժնեգինն է առքելան:

Թիւրքիոն 20 դրուշ

Ամերիկա 1, 50 տոլար

Եւրոպա 7 ֆրանք.

ԲԱԺԱՐԾՈՐԴԻ ԱՐԱԽԵԿԱՆ ԲԱՅԱՐՁԱԿՈՒԼԵՐ

ԿԱՆԿԻԿ է

Հասոցէն միշտ նոյնն է՝

125 Փառարկղ, կ, Պոլիս,



«ԴԱՅԼԱՅԼԻ» ի պինն է՝

Թիւրքիոյ համար

Առկազմ 8 դրուշ, փառակազմ 12 դրուշ.

Ամերիկայի համար

Առկազմ 50 սենթ, փառակազմ 70 սենթ.

Եւրոպայի համար

Առկազմ 3 ֆրանք, փառակազմ 4 ֆրանք.

Թուսիս 1 եւ 4, 40 ոռողիք :

10 հատ մեկն զնողները հատ մը ԶԵԿ կրօսման:

